



INTERNEWS ARMENIA

Այս գիրքը պատրաստել է «Ինտերնյուս» մամուլի աջակցության հասարակական կազմակերպությունը «Հայ-թուրքական մեդիա երկխոսություն» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը իրականացվել է Ինտերնյուս Նեթվորքի, Երևանի մամուլի ակումբի, Ստամբուլի մշակութային համալսարանի (Istanbul Kultur) GPOT կազմակերպության և CAM ֆիլմ ստուդիայի հետ համատեղ ԱՄՆ պետդեպարտամենտի ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրոյի (DRL) աջակցությամբ:

Գրքում արտահայտված տեսակետներն ու եզրակացությունները հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ պետդեպարտամենտի կարծիքները:



U.S. DEPARTMENT
OF STATE



INTERNEWS
NETWORK



YEREVAN
PRESS CLUB



ՄԵԴԻԱ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԹՈՒՐԻՔԻԱ

Ցանկ

Լախաբան	4
Ձմռան մի ցուրտ օր Երևանում	6
Սուբոլու Թոնբեքիչի	
Ստամբուլյան օրագիր	8
Վահե Սարուխանյան	
Լայել Արարատին Երևանից	12
Մուգե Աբգյուն	
Հայաստանցիները Ստամբուլում	15
Գայանե Աբրահամյան	
Բարև, Հայաստան	18
Բուրչուլ Բալըբթաշ	
«Արասն» ու հայերը	21
Լուսինե Խաչատրյան	
96 տարի անց Մուսա Լեռնից դեպի Հայաստան	23
Մեծմեդ Ալի Իզմիր	
Դեպի Վաքիֆլի	27
Աստղիկ Կարապետյան	
Փաստորեն ինչքան հեշտ է բարեկամ լինել	29
Հաբբը Օզդալ	
Երազների քաղաք Դիարբեքիրը և մի կաթիլ մեղրի պատմությունը	33
Քրիստինե Աղալարյան	
Տարբեր տեղեր ենք գնացել, եղբայր	37
Այսել Յաշա	
Հայկական եկեղեցիներ	40
Սոնա Քոչարյան	
Կարսում	42
Անդրանիկ Իսախրյան	
Այստեղը վերջակետն է	45
Մարինե Մարտիրոսյան	
«Հայ-թուրքական մեղիա երկխոսություն» օրագրի ֆիլմերը	48

Նախաբան

2010 թվականին «Ինտերնյուս» մամուլի աշակցության հասարակական կազմակերպությունը իր գործընկերների հետ սկսեց «Հայ-թուրքական մեդիա երկխոսություն» ծրագիրը՝ ԱՄՆ պետդեպարտամենտի ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրոյի աջակցությամբ և Ինտերնյուս նեթվորքի ղեկավարությամբ:

Ծրագիրն ուներ չորս հիմնական մաս, որոնք իրականացվեցին «Ինտերնյուս» հասարակական կազմակերպության, Երևանի մամուլի ակումբի, Ստամբուլի մշակութային (Istanbul Kultur) համալսարանի GPOT կազմակերպության և CAM ֆիլմ ստուդիայի համագործակցությամբ: Ընթացքում թե՛ կազմակերպիչները, թե՛ մասնակիցները ձեռք բերեցին նոր գործընկերներ Հայաստանում և Թուրքիայում, ինչն էլ նպաստեց հայ-թուրքական մեդիա երկխոսությանը:

Ծրագրի առաջին մասը հայ և թուրք լրագրողների փոխանակումն էր: Երկու երկրների լրագրողները հնարավորություն ստացան այցելել հարևան երկիր, շրջել ու ծանոթանալ հասարակական-քաղաքական կյանքին, մշակույթին ու պատմությանը, լինել տեսարժան վայրերում, հանդիպել տարբեր բնագավառի մարդկանց: Այդ ընթացքում Հայաստանի և Թուրքիայի առաջատար լրագրողները ընդհանուր առմամբ հրապարակեցին ավելի քան 300 հոդված, ռադիո և հեռուստատեսային նյութեր, ակնարկներ: Այս գրկույթում տեղ են գտել դրանցից մի քանիսը:

Ծրագրի երկրորդ մասը 16 հայ և թուրք լրագրողների ավտոբուսային շրջագայությունն էր Թուրքիայից Հայաստան: Այդ երթուղին անցել էր Անթաքիայով, Վանով, Կարսով, Տիգրանակերտով, Վրաստանով, Հայաստանով, հայ-թուրքական սահմանագծի բնակավայրերով և ավարտվել Մեդիոմ: Շրջագայության ընթացքում հրապարակված հոդվածներից մի քանիսը ևս տեղ են գտել այս գրքույկում:

Երրորդ մասը Երևանի մամուլի ակումբի և GPOT կազմակերպության պատրաստած թոք-շոուների հեռարձակումն էր Հայաստանի Երկիր Մեդիա և Թուրքիայի IMC հեռուստաընկերություններով, իսկ չորրորդը՝ հայ և թուրք ուսանողների համատեղ ֆիլմար-

տադրությունը: Յուրաքանչյուր երկրից վեց ուսանողներ հնարավորություն ստացան կյանքի կոչել իրենց գաղափարները և ֆիլմեր նկարահանել, հայերը՝ Թուրքիայում, իսկ թուրք երիտասարդները՝ Հայաստանում: Նրանք անցան համապատասխան ուսուցում, մեկնեցին ճանաչողական այցերի, նկարահանման, իսկ վերջում համատեղ հանդիպում անցկացրին Երևանում և քննարկեցին արդեն պատրաստի ֆիլմերը: Ուսանողների աշխատանքները քննարկվեցին նաև Հայաստանի և Թուրքիայի համալսարաններում: Այդ ֆիլմերը սկավառակով կցված են գրքույկին:

Հոդվածներն ու ֆիլմերը կարող են օգտագործվել ուսումնական, ճանաչողական նպատակներով և նախատեսված են հասարակության լայն շրջանակների համար:

Ձմռան մի ցուրտ օր Երևանում

Սուրբուր թնկեքիչի

«Վաթան» օրաթերթ
22.11.2011

Այս տողերը գրում եմ Երևանից: Աթենքից հետո ճանապարհը ձմռան մի ցուրտ օր ինձ Երևան տարավ: Իմ ձեռքին է էջե թեմեթուրանի «Արարատի ծանրությունը» գիրքը, որի միջոցով ծանոթանում եմ այս օտար, սակայն հարևան երկրին:

Հայաստանը մեր հազարամյա հարևանն է, սակայն Երևանի մասին ես ոչինչ չգիտեմ: Բացի Լրանից, որ Հայաստանն աղթատ է, և այնտեղ սարսափելի երկրաշարժ է տեղի ունեցել, իմ հիշողության մեջ ուրիշ ոչինչ չկա: Իհարկե,

Երևան ասելով՝ մտքիս մի հետամնաց քաղաք էր գալիս:

Առաջին շոկը: Հետամնաց մի քաղաք էիք սպասում, սակայն շքեղ մի օդանավակայանում իջանք: Չորս տարի առաջ բացվել էր մեկնման սրահը, 10 օր առաջ էլ բացվել էր ժամանման սրահը: Փայլուն օդանավակայան էր: Նոր օդանավակայանում իջնելն ինչքան է ազդում մարդու առաջին տպավորության վրա:



Իմ երկրորդ շոկն այն էր, որ ամեն տեղ տեսա խաղատներ: Քաղաքի մուտքը նման էր Լաս Վեգասին: Յետո տեղեկացանք, որ օրենքն է այդպես թելադրում, քանի որ խաղատները չեն կարող լինել քաղաքի կենտրոնում:

Երրորդ շոկն այն էր, որ տեսա Stefanel, Baby Dior, Victoria`s Secret, Armani, Gucci և ուրիշ բրենդային խանութներ:

Եհ, երկրագունդ... Երկրագնդի միջօրեականը 12 սմ-ով մոտեցել է, Իտալիայից, Իսպանիայից այստեղ են հոսել ապրանքներ, իսկ մենք 1 սմ-ով չենք կարողանում մերձենալ:

Իմ չորրորդ շոկը՝ գեղեցիկ քաղաքն էր... Մանրակրկիտ ձևով նախագծված:

Վանախաշ

Մեր առաջին ընթրիքն անում ենք «Մեր գյուղը» ռեստորանում: Մեզ մատուցում են Վանախաշ ճաշատեսակը:


Իհարկե, ո՞վ չգիտի, որ Վանը մի Ժամանակ հայկական քաղաք է եղել: Ինչպես հույների համար՝ Ստամբուլը, այնպես էլ հայերի համար՝ Վանը: Եվ այս ուտեստի անունն ինչո՞ւ Վան չպիտի լինի որ:

Սեղանին ճաշի պարագաներն են, մածուկը, մանր ճգմած սխտորը, աղացած մսով և ոսպով ապուրը և մանրացված լավաշը...

Այդ ամենը վարպետորեն խառնեցին և խնդրեմ...

Այսքանը:

Ողջույններ վանեցի ընկերներին...



Ստամբուլյան օրագիր

(հատվածներ)

Վահե Սարուխանյան

«Հետք» առցանց պարբերական
18.04 – 18.05.2011

24 ապրիլ. այո, նման բան եղել է

Ապրիլի 24-ը չնայած կիրակի էր, բայց նախապես գիտեի, որ դժվար օր է լինելու, քանի որ Ստամբուլում անցյալ տարվա պես նախատեսվում էր Ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու ակցիա կազմակերպել, որը, թերևս, այս շաբաթվա գլխավոր իրադարձությունն էր մեզ համար: Ակցիայի սկիզբ էր հայտարարվել ժամը 17-ը: Այստեղ իմացա, որ տեղի հայերն ապրիլի 24-ը գոնե ակներև չեն կարևորում այնպես, ինչպես Սփյուռքի մեր մյուս գաղթօջախներում: Թուրք հասարակական գործիչներից մեկը մեզ ասաց, որ այո, հայ համայնքը զգուշավորություն է ցուցաբերում այս հարցում՝ քաջ գիտակցելով իշխանությունների ու երկրի բնակչության ծանրակշիռ հատվածի վերաբերմունքը Ցեղասպանության խնդրին և դրանից եկող հնարավոր վտանգները: Այնուամենայնիվ, քաղաքի կենտրոնական Թաքսիմ հրապարակում սպասում էի տեսնել այս ընթացքում իմ հանդիպած հայերին: Չտեսա. կամ չէին եկել, կամ ուղղակի չհանդիպեցինք: Ցավոք, առաջին տարբերակը երևի ավելի հավանական է:

Այդուհանդերձ, հրապարակում շուրջ 200 հոգի մարդ էր հավաքվել՝ փոքրից մինչև մեծ: «Այս ցավը բոլորիս ցավն է» պաստառի վրա նրանք կարմիր մեխակներ դրեցին ու նույն տեսքով մոմեր վառեցին: Դուրսիկ ուղեկցությամբ լուռ ակցիան մարդիկ անցկացրին գետնին նստած: Այդ ժամանակ էլ Ստամբուլում գտնվելուս ընթացքում առաջին անգամ մոլլայի կանչը լսեցի կողքի մզկիթից: Իսկ քիչ հեռու հավաքվել էին մի խումբ թուրք ցուցարարներ, որոնք Աթաթուրքի ու Լենինի նկարներով հակաիմպերիալիստական ու հակահայկական կոչեր էին վանկարկում՝ ժխտելով Ցեղասպանությունը: Դրանք մարքսիզմ-լենինիզմի գաղափարախոսությունը կրող, նաև ազգայնական ժողովրդական ազատագրական կուսակցության անդամներ էին: Ոստիկանները շրթա էին կազմել՝ նրանց ու գետնին նստած մարդկանց միջև: Բայց այդ փոքրիկ խումբը, որ ինձ վրա կատաղած շան տպավորություն թողեց, ամեն կերպ փորձում էր իր կոչերով, ծափահարություններով, սուլոցներով լռեցնել դուրսիկ ու Ցեղասպանությանը զոհ գնացած հայտնի հայերի անունները կարդացող մարդկանց ձայ-

ները: Ապարդյուն: Վերջիններս 30-40 րոպե հարգանքի տուրք մատուցելուց հետո հանգիստ հեռացան՝ իրենց հետ վերցնելով ծաղիկներն ու պաստառը: Շատ չանցած՝ հրապարակում հայտնվեցին աղըրբեջանական դրոշներով, հակահայկական վանկարկումներով ու պաստառներով միտինգավորներ, որոնք վեր էին պարզել ձեռքերը «Գորշ գայլերի» հայտնի նշանով: Սրանք առաջիններից է՛լ ավելի կատաղած էին:

Սակայն ազգայնականների գոռոցները ոչինչ են այն փաստի ֆոնին, որ այսօր, ինչպես որոշ թուրք գործիչներ են խոստովանում, հայերի Ցեղասպանության թուրքական տաբուն ճեղքեր է տվել, և կամաց-կամաց ավելի շատ մարդիկ են ասում՝ այո, նման բան եղել է:

25-26 ապրիլ

Մարդու հիշողության մեջ յուրաքանչյուր դեպք, մարդ, առարկա կամ վայր տպավորվում է հստակ պատկերներով: Այսօր արդեն մտածում եմ, որ հետագայում Ստամբուլի մարդկանց մասին հիշելիս նախ կմտաբերեմ իրենց ապրանքը բարձր ձայնով գովացող շագանակավաճառ տղամարդկանց: Հետո երևի հիշեմ պաղպաղակ պատրաստող երիտասարդներին, որ ձեռնածուխ նման՝ երկար ձողի վրա վարպետորեն պտտեցնում են խյուսն ու գրավում տուրիստների ուշադրությունը, վերջիններիցս հիացական արտահայտություններ ու ժպիտներ շահում, ապա և՛ պաղպաղակի գինը:

Թբիլիսիցի երիտասարդներն, օրինակ, իմ մեջ տպավորվել են իրենց ազատականությամբ, տղաները հատկապես՝ գանգուր, շեկ, առատ մազերով ու, երբեմն, չսափած դեմքով: Թուրքերը մի փոքր այլ են. տղաները մեծ ուշադրություն են դարձնում իրենց սափրվածքին. մազաշատ դեմքերից մինչև ստորին շրթունքի տակ փոքր մազափունջ ունեցող երիտասարդների կհանդիպես: Շատերն էլ ձախ ականջին ականջող են կրում (ասում են՝ աջ ականջին կրելը միասեռականության նշան է):

Պատկերացնում եմ, թե ինչ կլիներ, եթե հայ տղերքը նման «ջահելի» տեսնեին իրենց շրջապատում: Նվազագույնը՝ մի քանի «քաղցր» ռեպլիկներն ապահովված կլինեին: Դե, իսկ թուրք աղջիկներն ու կանայք տղամարդկանցից ոչ պակաս ծխող են: Համենայն դեպս, այս օրերի ընթացքում ծխող կանանց ու տղամարդկանց տեսել եմ հավասարաչափ: Թուրքիայում ծխելը որոշ մարդիկ նույնիսկ համեմատում են Ռուսաստանում օդի խմելու հետ: Առողջապահության միջազգային կազմակերպության տվյալներով՝ այս երկրի տղամարդկանց 50 և կանանց 20 տոկոսը ծխող են:

Թուրքիայից ինձ հուշ կմնան նաև վարորդները: Սկզբում մտածում էի, թե թուրքերն այս ոլորտում մերոնցից հետ չեն մնում, բայց շուտով հասկացա, որ մերոնք դեռ թուրքերին «հասնելու» տեղ ունեն: Ստամբուլի լայն, բայց նաև մեքենաներով լի փողոցներում դիմացով

անցնող մարդատարի վարորդն այնպիսի ճարակությամբ Է բռնատարի ու մեկ ուրիշ մարդատարի արանքով երրորդից երկրորդ գիծ մտնում, որ ապշում ես: Մեզ մոտ հաճախ դա կավարտվեր վթարով, բայց այստեղ դեռևս նման բան չեն տեսել:

Ստամբուլում հաճախ կհանդիպես շուրթակ, թավջութակ, սագ, կիթառ կամ այլ գործիք նվագող մարդկանց՝ ծերունիներից մինչև երիտասարդներ: Սա փող աշխատելու ընդունված ձև է, ու ոչ ոք դրա համար թարս չի նայում այդ մարդկանց, ինչպես Երևանում, որտեղ մտածում են՝ եթե մետրոյի կայարանի մոտ կամ փողոցում նվագում, երգում է, ուրեմն բոմբից մի աստիճան է բարձր: Թուրքիայում մարդիկ փող են աշխատում հազար ու մի ձևով: Երիտասարդներից ոմանք աղբահավաք են, ուրիշները՝ մատուցող ու հավաքարար:

Քանի չեն մոռացել, ասեմ, որ Ստամբուլն իր չափերի քաղաքի համար համեմատաբար մաքուր է: Մեծ ու փոքր փողոցներից շատերում պարբերաբար շրջում են երկու մեծ խոզանակներով զինված մեքենաները, որոնք ներս են քաշում աղբը: Նրանց օգնում են հավաքարարները, որոնք հատկապես Իսթիկլալում անընդհատ շարժման մեջ են. ծխախոտի մի գլանակ, կոնֆետի մի թուղթ, այլ աղբ տեսան՝ անմիջապես ավլում են: Եվ ամենազարմանալիս հայերի համար. հավաքարարներն ու ճաշարանների մատուցողները, աշխատակիցները տղամարդիկ են: Հատկապես սևնդի օբյեկտներում աշխատողների ճընշող մեծամասնությունը շահել տղաներ են:

Թուրքիայում առայսօր մեծ տարածում ունի «Էստի համեցեքը»: Շագանակավաճառները, պաղպաղակավաճառները, լրագրավաճառները, լոտո վաճառողները, տարբեր թռուցիկներ բաժանողներն իրենց բացականչություններով ու առաջարկներով աստիճանաբար հոգնեցնում են ականջներդ:

Գործընկերներով որոշեցինք ծով գնալ երեկոյան: Բեյոջլուից Ոսկեղջյուր ծովախորշի վրայով իջանք Ստամբուլի բյուզանդական մաս տանող Գալաթայի կամրջի տակ: Կամրջի վրա՝ երկու կողմում, շարվել են ձկնորսները, ովքեր տեղում որսացած ձուկը վաճառում են մի քանի թուրքական լիրայով: Ամբողջ մայթը բուրում է ձկան հոտով: Կամրջի տակ ձուգվում է սրճարանների շարքը:

Մերօրյա «գիթորներին» տեսնելու համար հենց այստեղ պետք է գալ: Երիտասարդ, հաճելի արտաքինով տղամարդիկ, հատկապես, երբ անցնող կին ու տղամարդ են տեսնում, անմիջապես կտրում են նրանց ճանապարհն ու սկսում իրենց սրճարանում տեղ առաջարկել, գովել օբյեկտի հնարավորությունները՝ երաժշտություն, լավ միջավայր և այլն, և այլն: Մեզ հանդիպած երիտասարդն այնպես մեղրածոր ու թախանձագին էր առաջարկում նստել իրենց սեղանիկներից մեկի մոտ, որ ծիծաղներս չէինք կարողանում զսպել:

Նստեցինք սրճարանի ներսում. մի-մի հատ կոկտեյլ պատվիրեցինք: Քիչ անց մատուցողը սովորական նարնջի հյութ բերեց: Այ քեզ բան: Անգլերեն բացատ-

րեցինք, որ հյուր չենք ուզել, այլ՝ կոկտեյլ: Ասում է՝ այո, սա մրգի կոկտեյլ է՝ առանց ալկոհոլի: Ասում եմ՝ սա կոկտեյլ չէ, սովորական հյուր է, նա էլ թե՛ այո, հյուր է: Շնորհակալություն հայտնեցինք ու զխոժ արեցինք:

Մինչ այդ մեր «գիթորը» դրսում մի տղամարդու և երկու կնոջ առաջ գովում էր սըրճարանի սննդացանկը՝ մեկյուն: Ծիծաղով հետևում էինք նրա գործողություններին. «գիթորի» «ուռկանն այս անգամ ծովից

դատարկ դուրս եկավ»: Պետք էր միայն տեսնել նրա դեմքի արտահայտությունը: Չնայած սովորական նարնջի հյուրի համար վճարված անհամաչափ գումարին՝ արժեր գալ այստեղ՝ թեկուզ միայն այս կուրիոսը զգալու և «գիթորներին» տեսնելու համար:

Ստամբուլյան օրագիր. 23 x
 http://hetq.am/arm/articles/609/stambulyan-oragir-23-24-y-aprili.html
 Երեքշաբթի, մարտի 06, 2012
 Երևան, Հայաստան
 0° 8: 4' 9: -6'
 Լուրեր | Հոդվածներ | Տեսակետ | Հետաքննություն | Հարցազրույց | Հատուկ թեմ
 Հասարակություն | Սփյուռք |
Ստամբուլյան օրագիր. 23-24-ը ապրիլի
 ■ Վահե Սարուխանյան
 04:55, 25 ապրիլի, 2011
 Թուրքիայում երիտասարդությունը բավականին ակտիվ է: Ամսի 23-ին, երբ քայլում էինք Իսթիկլալով, մեծ թվով տղաներ ու աղջիկներ երթ էին կազմակերպել կենտրոնական պողոտայում ու տարբեր կոչեր էին վանկարկում, ծափահարում: Պարզվեց, որ նրանք կրթական բարեփոխումների կոչով դիմում են իշխող կուսակցությանն ու վարչապետ Էրդողանին, որոնք այս օրերին՝ խորհրդարանական ընտրարշավի ընթացքում, անշուշտ, մեծ խոստումներ են տալիս քնակչությանը: Երիտասարդներն էլ ահա օգտագործում են պատեհ առիթը:
 Սույն օրը Սուլայեն մեզ ծանոթացրեց իր ընկերների հետ. Մուստաֆան նրա ընկերն էր (boyfriend), իսկ Իբրահիմը՝

Լր
 13:1 ոսոյ գործ խոշ
 12:4 փաւ ավտ
 12:3

Նայել Արարատին Երևանից

Մուգե Աբգյուն

«Ռադիկալ» օրաթերթ
26.11.2011

Քաղաքներ կան, որ երբեք տեղ չեն գըտնում մեր այցելությունների ցանկում: Մի օր, սակայն, երբ պատահաբար հայտնվեք այդ քաղաքներից մեկում, կփոշմանեք, որ շուտ չեք եղել: Ձեր ուշքնումփտքն այնտեղ թողա՞՛՛ հետ կգաք ու կուզեք ձեր տեսածը պատմել բոլորին: Մեր արևելյան սահմանին կից,

ֆիզիկապես մոտ, սակայն հոգեբանորեն շատ հեռու գտնվող Երևանն այդպիսի մի քաղաք է: Ինքնաթիռից իջնելուն պես՝ սկսվում են քանդվել մեր նախապաշարմունքները: Խիստ ժամանակակից, լուսավոր ու գունավոր մի օդանավակայան է մեզ դիմավորում: Մուտքի վիզա ստանալը մի քիչ փչացնում է տրամադրությունդ, սակայն դուրս գալուց հետո Երևանի չոր ու սառը

46 Gurme

26 Kasım

Ararat'a Erivan'dan bakmak

Bazı kentler vardır, hiçbir zaman gidilecek yerler listesinde yer almaz ama bir gün tesadüfen yolunuz düştüğünde daha önce gitmediğiniz çok pısmır olursanız, sonra da orada kalarak geri dönersiniz. Sonra da herkeşle gördüğünüz güzelikleri paylaşmak, yolunuzu düşürün demek istersiniz.

Doğu sınırımızın hemen yanı ba-



yaşananların yükünü bir se-kilde iki toplum da üzerinden atmalı. Aramızdaki sınır kapısı da umarım yakın bir gelecekte açılır ve iki toplum birbirine daha fazla yakınlaşır.



Avelük kavurma

օրը թշուրմ-տանում է բոլոր բացասական երևույթները: Երևանը նուրբ ճարտարապետությամբ, մշակույթով և արվեստով լի մի քաղաք է:

Մեկը մյուսին մոտ և հեռու

Չնայած երևում են դժվար տարիների և տնտեսական անկայունության հետքերը, միևնույն է՝ քաղաքը մեծ փոփոխությունների մեջ է: Շինարարությունը, քաղաքի կենտրոնում կողք կողքի շարված միջազգային հայտնի բրենդային խանութները, գունավոր գովազդային վահանակները, խաղատներն ու վերջին մոդելի մեքենաներն այդ փոփոխության ապացույցներն են: Այցելության առաջին տպավորություններս սրանք եղան: Երեք օր անընդմեջ մենք հանդիպեցինք և խոսեցինք լրագրողների, արվեստագետների, երաժիշտների, խոհարարների և բաղադրատոմսեր հավաքողների, շուկայում առևտուր անող կանանց, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, մտավորականների և, վերջապես, Գառնիում «Ես Անիից եմ» ասող 96-ամյա տատիկի հետ, ով նկարիչ Ռուբեն Բաբայանի մայրն է: Ծանոթացանք քաղաքին և երկրին:

Շատ տպավորիչ էր մեր միջև անմիջապես ստեղծված մտերմությունը, երկու երկրների մշակութային ընդհանրությունները: Այնքան տխրեցնող է, որ չնայած այդ ընդհանրություններին, երկու հասարակությունները գտնվում են մեկը մյուսից մեկուսացված: Ես նրանց

սկսեցի հասկանալ, երբ այցելեցի Ցեղասպանության թանգարան:


Ավելի վաղ գնացողների պես՝ ես էլ Ցեղասպանության թանգարանում շատ ազդվեցի: Մեր անցյալի պատմության դասերին երբեք չպատմված, մեր կողմից մերժված, արհամարհված իրականության հետ դեմ առ դեմ դուրս եկա: Իհարկե, ցավ զգացի, որին ղեղատոմս չկա: Ինչևէ, ավելին ասելու կարիք չկա: Բացի այդ՝ ասելիք էլ չկա:

Պարզ է այն, որ երկու երկրները մեկը մյուսին լավ ճանաչելու համար պետք է, որ Թուրքիան հիշի իր անցյալը, իսկ Հայաստանը ցավերն այսքան կենդանի չպահի և անցյալը մոռանա: Արդեն պետք է տեղի ունեցած ղեպքերի բեռը որևէ կերպ երկու հասարակությունների ուսերից վերցնել: Հուսով եմ՝ մեր միջև սահմանը մոտ ապագայում կբացվի, և երկու հասարակություններն ավելի կմերձենան:

Երևանի խոհանոցը

Հայաստանում ուտել-խմելու հարցում ամենահայտնի անուններից մեկը ճաշատեսակներ ուսումնասիրող և հեռուստահաղորդավար Սոնիա Թաշճյանն է: «Ինտերկուլի» ծրագրի ղեկավար, բարեհաճ Արմեն Սարգսյանի նախաձեռնությամբ Սոնիայի տանը ծանոթացա իրական հայկական խոհանոցին: Ավելուկ, դավուրմա, բանջար, աղցաններ, տարեհաց, պանրով և ուրցով բլիթ, չեչիլ... և տասնյակ այլ ուտեստների համն, իհարկե, մի ուրիշ բան էր: Երևանում մշակույթը, արվեստը և խոհանոցը մի շարք այլ քաղաքների համե-

2011 Cumartesi



մատ՝ շատ ավելի են իրար մեջ խտացված: Ժամանակակից սրճարանների կողքին գործում են նաև ավանդական ռեստորանները: Դրանց մեջ ամենահայտնիներից է The Club-ը: Ներսում տարբեր բաժիններով են ներկայացված արվեստի սրահը, ավանդական ձեռագործ աշխատանքների վաճառքի սրահը, ռեստորանը, սրճարանը և համերգասրահը: Այն երեկո, երբ մենք այցելեցինք, բեմում էր Հայաստանի օպերայի և բալետի պետական թատրոնի երգիչ Պողոս Եղիազարը, ով 2000 թվականին 19 տարեկանում Ստամբուլից տեղափոխվել է Երևան:

Երևանում մեր հանդիպման մյուս կետն էր հայտնի ռեստորան Ararat Hall-ը, որը ևս հայկական ավանդական խոհանոցի ուտեստներից է ներկայացնում: Ռեստորանի տնօրեն և միևնույն ժամանակ սեփականատեր պարոն Սեդրակը հեռուստախոհանոցի հաղորդումների և գովազդների շնորհիվ հայտնի է ամբողջ երկրում: Այդ երեկո մեզ մատուցեցին պարզ, սակայն շատ համեղ ուտեստներ:

Երևանում ավանդական հայկական խոհանոց ներկայացնող լավագույն ռեստորաններից մեկն էլ «Մեր գյուղն» է: Տնական փոքրիկ ճաշասենյակի պես կահավորված հաստատության մեջ պատրաստում էին գյուղական համեղ ճաշեր: Այստեղ մեր փորձած ամենաօրիգինալ ուտեստը, որի մի մասը մեր ներկայությամբ պատրաստեցին, «Վանախաշն» էր: Մտով ապուրը, ճգմած սխտորը, մածուկը և մանրացված լավաշն առանձին-առանձին

են բերում և մի ափսեի մեջ են խառնում: Տեսքը՝ ոչ, բայց համը հրաշալի էր: Այստեղ մեզ հիացրեց մեկ այլ ուտեստ ևս, որը նույնպես մսապուրի մեջ էր պատրաստված՝ ծեծած բյուֆթայի հետ:

Ճաշ՝ քաղաքից դուրս

Երևանից դուրս՝ Գառնիում է գտնվում «Սերգեյի մոտ» ընտանեկան խոհանոցը, որտեղ գյուղացի կանայք նախ թոնիրում լավաշ թխեցին, հետո լավաշների հետ միասին մատուցեցին թոնիրում պատրաստված տնական հավը, կանաչիներով համեմված աղցանները, հետո էլ՝ քաղցր գաթա: Հայաստանում հայտնի քաղցրեղենների շարքում են նաև մրգերից տարբեր եղանակներով պատրաստված չրերը:

Հայաստանցիները Ստամբուլում

Գայանե Աբրահամյան

ArmeniaNow.com առցանց պարբերական
20.05.11



Չորսամյա Արփինեն ծնվել է Ստամբուլում, որտեղ ապրում ու աշխատում են նրա գյումրեցի ծնողները: Նեղլիկ ու խոնավ տան պատին Արարատի նկարն է, որը մատնացույց անելով ասում է. «Ես ա Հայաստանը»:

Չորս հոգուց բաղկացած նրանց ընտանիքի հայրն աշխատում է, որ պահի ոչ միայն իր ընտանիքը, այլ նաև Գյումրիում մնացած ծեր ծնողներին ու երկրաշարժին զոհ գնացած եղբոր ընտանիքը:

«Միակ ելքը Ռուսաստանն էր. գնացիք, բայց մի քանի ամիս աշխատանք չկար, ստիպված եղանք հետ դարձա Գյումրի, իսկ հետո տեղափոխվեցի Թուրքիա», - պատմում է միջին տարիքի տղամարդը:

Ինչպես շատ հայաստանցիներ, նրանց ընտանիքը ևս հաստատվել է Ստամբուլի Գումգափի թաղամասում, որն էժան է, հիմնականում այդտեղ կամ կողքի Բեյազիտ, Լալեյի թաղամասերում են կենտրոնացված շուկաները, կաշվե իրերի ֆաբրիկաները, ոսկերիչների արհեստանոցներն ու ձկնամշակման գործարանները:

Հին շենքերով, կեղտոտ ու անբարեկարգ փողոցներով այս թաղամասը բոլորովին այլ Ստամբուլ է, որն, ի տարբերություն զբոսաշրջիկներով լի կենտրոնի շքեղության, առանձնանում է միայն թշվառությամբ, և բնականոն կյանքի շարունակման միակ նշանը նախընտրական դրոշներն ու պաստառներն են, որ ծածանվում են խուճապած շենքերի վրա:

Հայաստանցիները պոլսահայ համայնքին գրեթե չեն ինտեգրվում, զուգահեռ ստեղծել են իրենց առանձին, մեկուսի իրակա-
նությունը՝ հիշողություններով ու կարո-
տով:

«Մենք եկել ենք, որ ընտանիք պահենք: Հաճախ են մեզ ասում՝ ամիթ, Թուրքիա եք գնացել...: Դեռ մե՞նք պիտի ամաչենք: Պետությունը պիտի ամաչի, որ մեզ այն-
պիսի ծայրահեղ վիճակի է հասցրել, որ ամեն ինչ թողել ենք ու եկել ստեղ՝ ծերե-
րի ենք պահում», - գայրույթից ու կարո-
տից հուզված ասում է 57-ամյա Համեստ
Հակոբյանը, ով Գյումրու դպրոցներից
մեկում մանկավարժ է եղել, սակայն օպ-
տիմալացման գոհ է դարձել ու ստիպված
Ստամբուլ եկել՝ աշխատանք գտնելու:

Թուրքիայում ապրող ապօրինի միգ-
րանտների մասին միակ հետազոտու-
թյան (Եվրասիա համագործակցություն
հիմնադրամի կողմից իրականացրած)
տվյալներով հայաստանցիների թիվը մոտ
15.000 է, որոնց ճնշող մասը՝ 96%-ը, կա-
նայք են: Հիմնական մասն աշխատանք է
գտնում տներում՝ մաքրող կամ դայակ,
իսկ տղամարդիկ զբաղվում են կոշկակա-
րությամբ կամ ոսկերչությամբ:

Սկզբնական շրջանում աշխատում են
պոլսահայերի տներում, սակայն լեզուն
սովորելուն պես՝ գրեթե բոլորը գերադա-
սում են աշխատել թուրքերի մոտ:

«Տարօրինակ է, բայց՝ փաստ. ում հարց-
նեք՝ թուրք տանտիրոջից ավելի գոհ է,
քան՝ հայից: Ես երկար մտածելուց հետո

հասկացել եմ, որ սա մեր ազգային բնա-
վորությունն է. մենք ուզում ենք իշխել,
ճնշել [մեր հայրենակիցներին]», - ասում է
Նախկին մանկավարժ Հերիքնազ Ավագ-
յանը:

Հերիքնազը Թուրքիա է եկել 2001 թվա-
կանին, 32 տարեկանում: Երևանում թող-
նելով մանկավարժի աշխատանքը՝ Նա
Ստամբուլում ևս ստանձնել է կարևոր
առաքելություն:

Տեսնելով, որ հայ անօրինական միգ-
րանտների երեխաներն անուսում են
մեծանում, քանի որ անօրինական միգ-
րանտների երեխաները որևէ դպրոց
հաճախելու իրավունք չունեն (անգամ
հայկական վարժարաններ, որոնք ևս պե-
տական են)՝ Հերիքնազը 2003-ին Նախա-
ծեռնեց դպրոցի ստեղծում, որտեղ այժմ
սովորում է 72 երեխա:

Սա մի փոքրիկ, Նկուղային, ընդհատակյա
դպրոց է, որը հնգամյա ուսում է ապահո-
վում երեխաների քիչ մասի համար:

Ըստ Եվրասիա համագործակցություն
հիմնադրամի հետազոտության տվյալնե-
րի՝ Թուրքիայում ապրում է մոտ 600-800
հայ երեխա, որոնց մեծ մասը փաստորեն
մեծանում է առանց ուսում ստանալու:

«Իրականում մեր դպրոցի մասին իշխա-
նությունները գիտեն, սակայն աչք են
փակում: Որքան գիտենք՝ Թուրքիայի
կառավարությունը սեպտեմբերից երե-
խաներին թույլատրելու է հաճախել
հայկական դպրոցներ, սակայն միայն
որպես ազատ ունկնդիր, առանց վկա-

յական տալու, ինչը, փաստորեն, չի լուծում կրթությունն ստանալու և շարունակելու հարցը»,- ասում է Յերիքնազը: Ուսուցչուհին ցավով շեշտում է, որ բացառիկ ընդունակությունների տեր բազմաթիվ երեխաներ իրենց դպրոցն ավարտելուց հետո, արդեն 13-14 տարեկակից սկսել են աշխատել շուկայում կամ զբաղվել ոսկերչությամբ, քանի որ ուսումը շարունակելու հնարավորություն չեն ունեցել: Իսկ մինչև դպրոցի ստեղծումն էլ՝ մի ամբողջ սերունդ մեծացել է առանց հայերեն տառերը ճանաչելու: Դպրոցը գործում է Գեղիկփաշա թաղամասի Հայ Ավետարանչական եկեղեցու նկուղային հարկում: Երեք սենյակներում կողք կողքի, միաժամանակ դաս են անում տարբեր տարիքի երեխաներ:

Պատի մյուս կողմում մանկապարտեզի 2-5 տարեկան սասներն են, որոնք քնում են մի փոքրիկ սենյակում՝ եռահարկ մահճակալներին կամ հերթով, սկզբում՝ ամենահոգնածներն ու ամենափոքրերը:

«Պայմաններն, իհարկե, շատ սուղ են, և, ցավոք, երեխաների թիվը գնալով աճում է: Եթե Պոլսո Պատրիարքարանն ուզենար, հաստատ կարող էր ավելի հարմար տարածք տրամադրել, սակայն մերժեցին: Գուցե չեն ցանկանում պետության հետ խնդիրներ ունենալ»,- ասում է դպրոցի տնօրեն Յերիքնազը:

Սակայն սա միակ հայկական դպրոցն է, որտեղ Աթաթուրքի նկարի փոխարեն Հայաստանի նախագահի ու կաթողիկոսի նկարներն են, Հայոց եռագույնը, և որտեղ

բոլոր առարկաները դասավանդվում են հայերեն:

«Գրքերն ու ծրագրերը հայաստանյան են, գրքերի հարցով շաչակցությունն ստացա միայն Հայաստանի կրթության և գիտության նախարարության Սփյուռքի բաժնից, որտեղ սրտացավ ու մտահոգ մարդիկ են աշխատում»,- ասում է Յերիքնազը՝ ցավով կշեռվելով, որ Ստամբուլ գնացած հայաստանցի որևէ պաշտոնյա իրենց դպրոց չի այցելել:

Անտարբերության ու դժվարությունների մասին խոսում են Ստամբուլում ապրող բոլոր հայաստանցիները:

«Ախր, առավել մեծ ուշադրություն հենց այստեղի միգրանտներին պիտի դարձնեն: Ճիշտ է, թուրքերը շատ լավ են վերաբերվում մեզ, բայց ահ ունենք: Քաղաքականությունը փոխվեց՝ առաջին տուժողը մենք ենք լինելու, ամեն անգամ, երբ ոստիկան ենք տեսնում, վախից թուլանում ենք, չնայած իրենք էլ լավ գիտեն՝ ով որտեղ է ապրում,- հուզված ասում է Համեստ Հակոբյանն ու պայուսակից հանում իր ծոցատետրը, որտեղ գրում է կարոտից ծնված բանաստեղծություններ:

«Կարոտից բանաստեղծ էլ դարձանք»,- ասում է նա ու արցունքով, դողացող ձայնով կարդում. «Պանդուխտ հայ եմ, լացով կապրիմ...»:

Բարև, Հայաստան

Բուրջու Բալըբթաշ

«Բիանետ» առցանց պարբերական
01.06.2011

«Հեռվից եկա, հեռուն եմ գնում» ասելով՝ ճանապարհ ընկա: Այդ օրերին քննարկվում էր ստամբուլահայ Սևակ Շահին Բալըբթաշի սպանությունը (ժամկետային զինծառայող Սևակ Շահինը սպանվել է թուրքական բանակում, 2011թ.-ի ապրիլի 24-ին, թուրք ծառայակցի կողմից – խմբ.): Այդ օրերին սկսել էին քանդել նաև Կարսի «Մարդկության հուշարձանը» (հայ-թուրքական բարեկամությունը խորհրդանշող հուշարձան, որն ապամոնտաժվեց Թուրքիայի վարչապետ Էրդողանի կարգադրությամբ – խմբ.), իսկ Ֆրանսիայում մերժվել էր Ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը...

Այդ օրերին Հայաստանում մարզից մարզ շրջագայելու ժամանակ ես շատ բառեր սովորեցի: Երբ տուն վերադարձա, իմ նութատետրում գտա եղիշե Չարենցի տողերը, որոնք գրել էի 11 տարի առաջ ու մոռացել:

Հեռու, մոտիկ ընկերներին,
Աշխարհներին, արևներին,
Հրանման հոգիներին:

Բոլոր նրանց, ում որ հոգին վառվում է վառ,

Բոլոր նրանց հոգիներին արևավառ:
Կյանքի, մահի՛ այս ամեհի աղջամուղջում,
Ողջակիզվող հոգիներին՝ ողջույն, ողջույն:

Հայաստանցի ընկերները միշտ մեր անվան կողքին «ջան» էին ավելացնում, նոր դիմում մեզ: Ահա, իմ այս գրածը թող այդ «ջան»-երի պատասխան ողջույնը լինի:



Անցյալի և ներկայի հետքերով

Հանգիստ խղճով գրում եմ այս նախադասությունը. «Մի ավտորուսային շրջագայությունը փոխեց իմ կյանքը»: Դա մի ուղևորություն էր, որի ընթացքում ամեն առավոտ մենք ճանապարհ էինք ընկնում դեպի մի նոր քաղաք:

Հայաստանում շփվեցինք տասնյակ մարդկանց հետ, սակայն 1915-ի ստվերը հետապնդում էր մեզ: Լրատվամիջոցներում հաճախ հիշատակվող «հողային պահանջի» և այլ փաստարկներով լի խնդրի թե՛ անցյալի, թե՛ ներկայի հետքերն ընկալելով՝ աշխատեցինք միմյանց հասկանալ: «Մեր երկրների միջև ինչ հարաբերություններ պետք է լինեն» հարցը բարձրացնելիս հասկացանք, թե առօրյա կյանքում ինչքան նման ենք իրար և լավ բարեկամներ գտանք:

Դեպի Հայաստան

Շրջագայությունը սկսվել է Ադանայից, ներառել Անթաքիա, Շանլուրֆա, Դիարբեքիր, Վան և Կարս քաղաքները: Ես շրջագայությանը միացա Թուրքիայի վերջին կետում՝ Կարսում, որից հետո ուղևորվեցինք Վրաստանի Ախալցխա քաղաքով դեպի Գյումրի, Ալավերդի, Երևան, Գորիս, Մեղրի և կրկին Երևան:

Կարսում օրակարգային էր «Մարդկության հուշարձանի» ապամոնտաժման հարցը: Մենք հանդիպեցինք Politikars ինտերնետ կայքի ղեկավար, Կովկասի մշակույթների հետազոտությունների կենտրոնի խորհրդի նախագահ և միևնույն

ժամանակ ճարտարապետ Ալի Իսան Ալընաքի հետ, ով ստեղծված իրավիճակը համարում էր վիրավորական:

Ըստ նրա՝ Թուրքիայում իշխող համակարգն այսպես ասած «աջ է քաշում», ականջ չի դնում միջազգային ճնշումներին և «Մարդկության հուշարձանի» քանդումով ուղերձ է հղում ազգայնական տարրերին: Նա նշեց, որ հուշարձանի քանդման դեմ ինտերնետում ստորագրահավաք են իրականացնում: Իսկ մեր հայ գործընկերների հարցերը, որոնք լավատեսական պատասխաններ էին սպասում, մնում էին օդում:

Ալընաքը հոռետես է հայ-թուրքական հարաբերությունների, սահմանի բացման հարցում, պնդելով, որ փակ սահմանը բացասաբար է ազդում տնտեսության վրա: «Սահմանը 1992 թվականից ի վեր փակ է: Ամեն տարի ասում են, թե հարաբերությունների լավացումով սահմանը բացվելու է: Սակայն դա համարձակության գործ է: Չեմ կարծում, թե առանց 100 տարի առաջ տեղի ունեցածի հետ ամերեսպելու սահմանը բացվի», - ասում է Ալընաքը:

Հայ ուղեկցողի հետ Կարսի փողոցներում

Մինչև Կարսից հեռանալը ցանկանում ենք տեսնել «Մարդկության հուշարձանը»: Հայաստանյան մեր հանդիպումներում թարգմանչի պարտականությունը ստանձնած Անդրանիկ Իսախրյանի հետ Կարսի փողոցներում ենք: Անդրանիկը թուրքագիտական ֆակուլտետն է ավար-

տել, նրա արմատները Մուշից են: Նա գրում է news.am լրատվական կայքում, որն ունի հայերեն, թուրքերեն, անգլերեն և ռուսերեն ծառայություններ: Երբ ես ներկայացա, հասկացա, որ նա Bianet-ի մասին դրական տպավորություններ ունի: Անդրանիկը ոչ միայն Bianet-ին, այլև բոլոր լրատվական աղբյուրներին շատ ուշադիր հետևում է: Նույնիսկ, երբ գրույցում որևէ թուրք գործչի անուն չէիսք հիշում, Անդրանիկն անմիջապես մեզ օգնության էր հասնում:

«Մարդկության հուշարձանի» քանդման աշխատանքներն իրականացնող «Աֆշին» ընկերության աշխատակիցները չեն ցանկանում, որ իրենց լուսանկարենք: Ըստ նրանց՝ դա Թուրքիայի վրա բացասաբար կազդի: Աշխատակիցներից մեկը ցույց է տալիս ներքևում գտնվող պրիեթիկենե ծածկերով տները՝ ասելով. «Այս հուշարձանի համար այնքան գումար է ծախսվել: Դուք այս աղբատությանը նայեք»: Կարսի հիմնական խնդիրը գործազրկությունն է և աղբատությունը: Եվ դրա համար մեր գրուցակիցը փորձում էր օձիքի վրայից աննկատ հանել կուսակցական նշանը, որ ավելի հավատալի լինեն իր խոսքերը:

Վարդանի կամուրջն ու Չարենցի տունը

Առաջին անգամ էի Կարսում, և հայաստանցի երկու ընկերների հետ փողոցներով շրջում էիսք: Շատ հետաքրքիր էր Կարսի մասին լսել Անդրանիկից: Կարսի ամրոցը վեր է հառնում հենց դիմացո, իսկ

ներքևում, ժայռի լանջերին երեխաներ են խաղում:

Մենք գնում ենք ներքև՝ դեպի Վարդանի կամուրջ: Անդրանիկը պատմում է այդ կամրջի պատմությունը, որը հայտնի է որպես «Քարե կամուրջ»: Այս կամրջից երբեք չբաժանված գիժ Վարդանն իրեն այստեղից նետել է Կարսի գետը:

Մեր մյուս կանգառը «Յայերի Նազըմ Յիբմեթ» (թուրք հայտնի գրող-խմբ.) համարվող Եղիշե Չարենցի տունն է: Տեղեկանում եմ, որ Կարս ժամանող ցանկացած հայ անպայման այցելում է այստեղ: Սակայն կարսեցի գրողի տունն ավերակ վիճակում է: Մի ստամբուլահայ ցանկացել է գնել այս տունը և վերածել թանգարանի, սակայն տանտերն այնպիսի մեծ գումար է պահանջել, որ նա չի կարողացել գնել: Չարենցի ստեղծագործություններում հուշեր կան դիմացի երկաթե կամրջի ու մի ժամանակ տան դիմաց գտնվող այգիների մասին: Եվ հենց այս պահից սկսվում է իմ ճանապարհորդությունը դեպի Յայաստան: Չարենցն ինձ ճանապարհում է, և տուն վերադառնալիս էլ նա է դիմավորելու:

մեծ արձագանք է ունեցել և մինչ այսօր թուրք ընթերցողի կողմից պահանջված է ու արդեն տասներորդ թուրքերեն վերահրատարակությունն է ունենում: Այժմ «Արասի» աշխատակիցները ֆրանսիացի պատմագետ Ռենե Գուրուսեի՝ Հայոց պատմությունը ներկայացնող գրքի թուրքերեն թարգմանությունն են կատարում: Մոտ օրերս արդեն պատրաստ կլինի Արշիլ Գորկու մասին գիրքը, որը տպագրության է պատրաստել Նուրիցա Մաթոսյանը: Վերջինս մայիսի 28-ին կլինի Ստամբուլում, գրքի շնորհանդեսից զատ՝ թուրք հանդիսատեսին կներկայացնի նաև Արշիլ Գորկուն նվիրված իր բեմադրությունը:

Փայլիսե Թովմայանի փոխանցմամբ՝ որպես հայկական հրատարակչություն, «Արասի» դժվարությունները չեն տարբերվում թուրքական հրատարակչությունների դժվարություններից, ավելին, ինչպես տնօրենն է փաստում, գրքի տոնավաճառների ժամանակ Թուրքիայի մշակույթի նախարարն «Արասի» տաղավար է այցելում ու շնորհակալություն հայտնում կատարած աշխատանքի համար: Այս շաբաթ «Արասի» աշխատակազմը մեկնելու է Տիգրանակերտ և առանձին տաղավարով թուրքական հրատարակչությունների կողքին մասնակցելու է գրքի տոնավաճառին:

Մարալ Աթթեմաթյանն արդեն չորրորդ տարին թարգմանիչ է աշխատում հրատարակչությունում: Ստամբուլի Բողազիչի համալսարանում անգլերեն գրականություն է ուսումնասիրել, այժմ էլ

դոկտորական ատենախոսությունն է պատրաստվում պաշտպանել նույն համալսարանում: Նրա փոխանցմամբ՝ 2007 թվականից Բողազիչի համալսարանում գործում է օտար լեզուների ամբիոնը, որտեղ նաև հայերեն դասընթացներ են անցկացվում: Նրա խոսքով՝ հայերեն դասերի նկատմամբ համալսարանում հետաքրքրությունը մեծ է նաև թուրքերի կողմից: «Բողազիչին առաջադիմական համալսարաններից մեկն է: Համալսարանի դասախոսները, որոնցից միայն մեկն է հայ, ինձ միշտ քաջալերում են, որ թեզս հայկական թեմայով պաշտպանեմ: Նման քաջալերություն չես տեսի Թուրքիայի մնացած համալսարաններում», - մեզ հետ զրույցում անկեղծանում է Մարալը: Ավելի ուշ հավելում է, որ հայն իր մշակույթով, գիտելիքով պետք է ներկայանա աշխարհին: Մեր զրուցակիցն ասում է, որ մոտ քսան տարի առաջ հայ լինելու առումով վախ ունենալը բնական կարող էր լինել, բայց Հրանտ Դինքի մահից հետո շատ բան է փոխվել. «Դինքի մահից հետո տգետ հասարակությունը հայ բառի հետ նորովի ծանոթացավ, քանի որ այդ բառը մինչ այդ որպես հայիոյանք էր հնչում»:

96 տարի անց Մուսա լեռից դեպի Հայաստան

Մեհմեդ Ալի Իզմիր

«Սթար» պարբերական
24.05.2011

Թուրքիայից և Հայաստանից 15 լրագրող Ադանայից մինչև Երևան գնացինք պատմության դառը հետքերով: Մեր այցելած ամեն քաղաքում տեսանք, որ հայերը ստիպված են եղել հեռանալ այս հողերից, սակայն կորցնողն Անատոլիան է եղել:

Տասնյակ տարիների խնդիր է սա: Ցավը, կարոտը, զայրույթը մեծ է... Ավելին, քրդական հարցից հետո Թուրքիայի համար ամենաբարդ, ամենախորը և ամենավիճելի խնդիրն է սա. Անատոլիայի հայերի և տեղահանության խնդիրը: Երկու հասարակությունների համատեղ հիշողության մեջ էլ խորը հետքեր թողած այս մեծ ողբերգությունն «ավարտվեց» նրանով, որ Անատոլիայի հայերը կամ Օսմանյան կայսրությանը հավատարիմ ազգն անվերադարձ հեռացավ այն հողերից, որտեղ հազարավոր տարիներ ապ-

րել էր: Ինչքան էլ ասեն, թե այս մեծ ողբերգությանը անուն տալը քաղաքական գործիչների խնդիրն է, միևնույն է՝ այս հողերում ապրողները պետք է կրկին հետաքննեն պատմության այդ դրամատիկ ժամանակաշրջանը: Բայց ինչպե՞ս: Այդ բացասական իրադարձությունների ժամանակաշրջանում տեղի ունեցած դառնությունները



հասկանալու համար գնացինք դրանց հետքերով:

Հայաստանից և Թուրքիայից լրագրողները տեղահանության ամենադրամատիկ իրադարձություններից մեկի թատերաբեմից՝ Մուսա լեռից գնացին Երևան: Այն համոզմամբ, որ մեկ այլ աչքով կկարողանան նայել մարդկանց տառապանքներին...

Կապիտալը կլուծի ինդիրը

Ավտորուսի մեջ ենք Տիգրանի, Քրիստինեի, Աստղիկի, Սոնայի, Անդրանիկի և Արմենի հետ: 16 օր հետո նրանցից բաժանվելու ենք գրկախառնվելով ու աչքներս թաց: Սակայն հիմա հայացքներն անհանգիստ են ու խառնիխուռն: Մեր առաջին կանգառն Ադանան է: Մենք ցանկացանք ուղևորվել

Քոզան կամ հայերենով ասած՝ Սիս, սակայն ճանապարհի չկար: Վերադառնալով Ադանա՝ հանդիպում ենք Թուրքիայի երիտասարդ գործարարների հետ: Ադանայի երիտասարդ գործարարների միության նախագահ Հաբան Չելիքը Ցեղասպանության հարցի հետ կապված նշում է, թե խնդրի լուծումը երկու երկրների միջև գործարար համագործակցությունն է: Ցեղասպանության հարցով պատմաբաններն ու քաղաքական գործիչներն են զբաղվում: Եթե այն մեզ թողեն, լուծումը հանգիստ կլինի: Բոլորը կշահեն: Չենք ուզում կառչած մնալ պատմությունից, ուզում ենք բիզնես անել»:

Երգչախմբի միակ հայ աղջիկը

Անթաթիայի հայտնի «Քաղաքակրթությունների երգչախումբը» մեզ է սպասում: Հնչում են հայերեն, թուրքերեն, ասորերեն և այլ լեզուներով կատարումներ: Երգչախմբի 16-ամյա հայ աղջիկը հայտնվում է մեր հայաստանցի գործընկերների ուշադրության կենտրոնում:

Երբ մենք Շանլուրֆայից ուղևորվեցինք դեպի Վան, ամբողջ խմբի անդամներն իրենց մտքում քննարկում էին, թե ինչո՞ւ են միմյանց այդքան նման երկու հասարակությունները 100 տարի իրարից առանձնացված մնացել: Ֆուտբոլային դիվանագիտությունից հետո երկու երկրների քաղաքական հարաբերությունները մերձեցնող ամենակարևոր քայլն այդ քաղաքում է արվել: Հայերի հին եկեղեցին՝ 1100-ամյա Աղթամարը վերանորոգվել և 100-ամյա ընդմիջումից հետո կրկին

24 MAYIS 2011 SALI

da değilsin

tarihin acı izlerini sürdük. Girdiğimiz her akıldılar ama kaybeden Anadolu oldu.

ONLARCA yıllık bir sorun bu; acısı, özlemi, öfkesi büyük... Üstelik Türkiye'nin Kürt sorunundan sonra en çetrefilli, en derin ve tartışılması en zor konusu. Anadolu Ermenileri ve tescir sorunu. İki toplulmanın da ortak hafızasının da derin izler bırakan bu büyük trade Anadolu Ermenileri'nin ya da Osmanlı'nın 'Millet-i Sadıka'sının binlerce yıldır yaşadığı topraklarından dönmek üzere ayrılmasıyla "son" buldu. Bu büyük trajediye isim vermek siyasilerin işi olarak görülür de, bu topraklardaki herkes tarihin bu dramatik bölümüne dair yeniden bir sorgulama yapmalı. Peki ama nasıl? İdeolojikleşmiş tarihi öğereyi malum. Bu kısır döngüyü yaşıyan acıların ayak izlerini takip etmek zorundayız. İstanbul'da çalıştık. İstanbul Kültür Üniversitesi-GPOT (Global Politics Trends Center), Erivan Basın Kulübü ve Internews Armenia'da bu düşünceden yola çıkarak iki bin yıldır birlikte, içiçe yaşayan iki halkın



yakanlaşmayı sağlayan en önemli adım bu kentte atılmıştı. Ermenilerin kadim kilisesi bin 100 yıllık Akdamar, restore edilip, 100 yıllık aranın ardından ibadete açılınca... Hemen Akdamar'a geçiyoruz. 20 gazetesinin kaprisini çeken rehberimiz Ferzan Demirbaş'ın çırpışlarına rağmen adanın dört yanına dağılıp tarihin izlerini arıyoruz. Ertesi sabah yemeğe giderken kendimizi BDP mitinginin ortasında buluyoruz. Bir gün önce yaptığımız sert açıklamalarla gündeme oturan DTK Es Başkanı Ayşel Tuğluk, sözlerinin çarpıtılmasından yakını: "Ben her koşulda birlikte yaşayacağım."

բացվել է կրոնական արարողությունների համար: Անմիջապես այցելում ենք Աղթամար: Չնայած որ 20 լրագրողի կամակորուրդները տանող մեր ուղեկցող Ֆերզան Դեմիրբաշը փորձում է մեզ հավաքել, սակայն մենք ցրվում ենք՝ փնտրելու պատմության հետքերը:

Հաջորդ օրը ճաշի գնալիս ականա հայտնվում ենք «խաղաղություն և ժողովրդավարություն» (BDP) կուսակցության հանրահավաքի մեջ: «Դեմոկրատական հասարակության կոնգրեսի» (DTK) նախագահ Այսել Թուլլուբը դժգոհում է, որ մեկ օր առաջ մամուլում իր խոսքերն աղավաղել են: «Ես ասել եմ՝ ոչ մի պարագայում չենք կարող միասին ապրել: Թե դրախտ լինի, թե՛ դժոխք»:

Մի կողմը՝ Աղրը, մյուս կողմը՝ Արարատ

Վանից Կարս գնալու ընթացքում մեր հայ գործընկերների տրամադրությունը մեզ էլ է պատում: Ուղղությունը՝ Դողու Բայագեթ: Աղրը իր ամբողջ վեհությամբ մեր առջևում է: Տեղեկանում ենք, որ հայերը բոլոր լեռներին մեկ արական և մեկ իգական անվանում են տալիս: Աղրի արական անունն Արարատ է, իսկ իգականը՝ Մասիս: Իջևում ենք ու Նայում հսկա լեռանը: Ճանապարհի ամեն մի հատվածը վարպետորեն լուսանկարող Տիգրանը ծիծաղելով ասում է. «Մեր կողմից այն ավելի գեղեցիկ է Նայվում, կտեսնեք»: Առանց ժամանակ կորցնելու գնում ենք դեպի Թուրքիայում մեր շրջագայության վերջին կանգառ՝ Կարս:

Մեկիք Ահմեդ, Ալի Փաշա, թե՛ Խանչեփեքի թաղամաս

Շրջագայության ամենահետաքրքիր պահերը տեղի են ունենում Դիարբեքիրում: Մեր առաջին կանգառը Դիարբեքիրի քաղաքապետ Օսման Բայդեմիրի աշխատասենյակն է: Բայդեմիրն ուրախ է և ոգևորված: Նա պատմում է հայերի և ասորիների օգտին կատարված աշխատանքների մասին և տխրությամբ ավելացնում. «Այս հին քաղաքը շատ արժեքներ է կորցրել: Հայերը, եզդիները, ասորիները գնացին, և մենք նրանց կորցրեցինք»: Այնուհետ Սուրի քաղաքապետ Աբդուլլա Դեմիրբաշի աշխատասենյակում ենք: Նա հպարտությամբ ցույց է տալիս հայերենով հրատարակված մանկական մի գիրք:

Ուղղություն ենք վերցնում Մեհմեդ Ալի կամ հայերենով ասած՝ Խանչեփեքի թաղամաս: Անցնում ենք չորս սյուներով միևնառիթմի մոտով և հասնում «Գյավուրների թաղամաս»: Դիարբեքիրի քաղաքապետարանի կողմից վերանորոգվող Մերձավոր Արևելքի ամենամեծ հայկական եկեղեցին ենք գնում: Շրջում ենք փողոցներում: Ամեն անկյունում թաքնված են 100 տարի առաջ այստեղ ապրած երեխաների ծիծաղը, չարածճիությունները: Սզկիթի էզանը վերջանում է, և սկսում է հնչել եկեղեցու զանգը: Ասորիները Նստած են անկյունի սրճարանում: Հին քաղաքն արտասվում է անցյալի համար: Հիմա այն միագույն է, իսկ հին բնակիչները հեռվում են:

Մեր կոորդինատոր Նարոդ Մարաշիլյանի առաջարկով նստում ենք ավտոբուս: Երևի Կարսը գլխավորում է դառն պատմություն տեսած և ամենաշատ խառնաշփոթն ապրած քաղաքների ցանկը: Ռուսական ժամանակներից մնացած լայն պողոտաներ, հայ վարպետների կառուցած շենքեր. սրանցից կարելի է տեսնել նաև «Կարսի երկվորյակ» գյուղիում: Մի քիչ հետո զբոսնելու ենք հայկական Բագրատունիների թագավորության մայրաքաղաք Անիի ավերակներում: Բագրատունիների հին մայրաքաղաքում՝ Անիում, ցուցատախտակների վրա պատմվում են այնտեղ ապրած ազգերի մասին, սակայն դրանցում չեն հիշատակվում Անիի հիմնադիրները՝ հայերը: Խոր կիրճի մեջտեղում երկու երկրները բաժանող Արփաչայն է հոսում: Մենք այստեղից Հայաստանն ենք տեսնում, մեր գործընկերները՝ իրենց հայրենիքը: Քաղաքի կենտրոնի մի սրճարանում Ահմեդ պապի հետ էինք խոսում: Նա ամեն ինչ ամփոփում է. «Մեր ցավերը երկկողմանի են: Նրանց գնալուց հետո այստեղ դատարկ մնաց»:

Հաթայում ենք

Մուսա լեռան փեշին, Թուրքիայի միակ հայկական գյուղում՝ Վաքըֆլըքոյում ենք: Ոլոր ճանապարհների և նարնջի այգիների միջև ընկած գյուղի բնակչությունը 135 հոգի է: Նրանք իրենց կրոնական արարողություններն իրականացնում են Հաթայում կամ սպասում են, որ Ստամբուլից հոգևորականներ գան, քանի որ իրենց գյուղի հոգևորականը 2003-ին վախճանվել է:

Համայնքի երիտասարդ ներկայացուցիչ Ջեմ Քաչարը խնդիրների մասին խոսելիս ամենաշատը սա էր շեշտում:

Շանլըուրֆայում առաջին քյաբաբային խոռովությունը

Շանլըուրֆայում մեր խմբին են միանում չորս գործընկերներ Աբխազիայից, Օսթթիայից և Վրաստանից: Սակայն նրանք, քաղաքական խնդիրներից ելնելով, մեզ ուղեկցեցին մինչև Կարս: Շանլըուրֆան փոքրիկ խոռովության առիթ դարձավ: Քյաբաբային խոռովության: Երեք օր, օրը երկու անգամ մեր հայ գործընկերներին քյաբաբ էին մատուցել: Նրանք Շանլըուրֆայում խոռովություն բարձրացրեցին՝ ասելով. «Մենք տեղի ճաշատեսակներն ենք ցանկանում ուտել»: Մենք էլ միացանք այդ խոռովությանը:

Դեպի Վաքիֆլի


Աստղիկ Կարապետյան

«Երկիր» առցանց պարբերական
06.05.2011

Ադանայից շարժվում ենք դեպի Անտիոք, թուրքերն այն Անտակիա են կոչում: Առաջինը մտնում ենք Մուսա լեռան լանջին գտնվող Վաքիֆլի գյուղը՝ «թանգարան», որտեղ ցուցադրված են հայերը: Էնվերն ու Թալեաթը որոշել էին միայն մի հայ թողնել, այն էլ՝ թանգարանում: Սա միակ գյուղն է Ներկայիս Թուրքիայի տարածքում, որը հայկական է, որտեղ հայեր են ապրում՝ այն եզակի հայերը, որոնց իրենց հայրենիքում ապրելու իրավունքից չեն զրկել:

Թալին Քարտունը, ում հանդիպում ենք գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցում (կառուցվել է 1890 թվականին՝ որպես շերամագործության կենտրոն, այնուհետև, 1924 թվականին եկեղեցի են դարձրել), պատմում է, որ տեղի հայկական յոթ գյուղերի բնակիչների մի մասը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին գաղթել է այլ բնակավայրեր, մյուսներն էլ աստիճանաբար խմբվել են այս գյուղում:

Թալինը մանկությունն այստեղ է անցկացրել, հետո տեղափոխվել է Երևան, կրթություն ստացել ու վերադարձել՝ հարս եկել Վաքիֆլի: Պատմում է, որ գյուղում 35



տուն կա, 135 մարդ է ապրում: Մեծ մասը ծերեր են, երիտասարդները կրթություն ստանալու համար Ստամբուլ են գնում: Հայկական դպրոց չկա. թեև դրա համար շենք կա, բայց կողպված է: Ուսուցիչ չկա, ու դպրոցահասակներն էլ ընդամենը քսանհինգն են՝ տարբեր տարիքի, նույն խմբում ուսանել չեն կարող:

Գյուղը քահանա չունի, ժամանակ առ ժամանակ Ստամբուլից քահանա են ուղարկում. գալիս է, մի երկու շաբաթ մնում, եկեղեցական արարողություններն անում, երեխաների հետ հայերեն պարապում՝ թուրքերեն տառերով՝ հայերեն:

Հարցին, թե երեխաներն ի՞նչ լեզվով են իրար հետ խոսում, Թալինը պատասխանում է. «Մուսա լեռան բարբառով են

խոսում: Թուրքական դպրոց են գնում, թուրքերեն ավելի շատ են խոսում, բայց հայերեն հասկանում են: Իսկ ամռանը՝ մեր եկեղեցու տոնին, երբ շատ հայեր են գալիս, գյուղում մոտ 3000 հայ է լինում: Հարիսա ենք եփում: Ոնց որ երեխաների լեզուն էլ է փոխվում, հայերեն են խոսում»:

Գյուղում մարդիկ այգեգործությամբ են զբաղվում: Թալինի ամուսինը մեծ մեքենա ունի, նարինջը մշակում են, հետո տանում Մարաշի շուկա վաճառելու: Ի դեպ, նրանց այգիները մշակում են տաճիկները՝ թուրքերը, իսկ իրենք հետևում են աշխատանքներին:

Իսկ Վահանուշ Քարտունն արդեն քառասուն տարի է Գերմանիայում է բնակվում, միայն տարվա 5-6 ամիսն է բարեկամների մոտ՝ Վաքիֆլիում անցկացնում:

Գյուղի ամենածեր բնակիչն 97-ամյա Ավետիս Դեմիրչին է: Նա այս գյուղում է ծնվել ու ամբողջ կյանքն այստեղ է ապրել: Հիշում է, որ իրենց գյուղում հայկական դպրոց կար, բայց հայրն իրեն կրթության չտվեց. «Հովիվ էր, երեք ոչխար ունեինք: Բայց հայկական ինչ գիրք, թերթ լիներ՝ գրպանս էի դնում ու կարդում: Շատ էի սիրում կարդալ. մեր գյուղում ինձ նման հայերեն կարդացող չկար»: Ավետիս պապն ասում է, թե երկու տարի առաջ հիշողությունն ավելի լավ էր, իր կյանքում տեսած պատերազմների մասին մանրամասները հիշում էր, իսկ հիմա աչքերն էլ լավ չեն տեսնում, գիրք էլ չի կարդում: Խնդրում ենք հայերեն մի բան երգի՝ Չայաստանի հիմնն է երգում, հետո էլ. «Մենք

անկեղծ զինվոր ենք, ուխտել ենք ծառայել երկար ժամանակ, կյանքի փրկություն, համոզված ենք, որ միայն զենքով կա հայուն փրկություն»:

Թալինը պատմում է, որ Վաքիֆլի այցելողները ցանկանում են անպայման տեսնել գյուղի ամենածեր հային: Իսկ հարցին, թե երիտասարդ ընտանիքներ կա՞ն, պատասխանում է. «Մոտ տասը ընտանիք, բայց... վերջին երկու տարիներին գյուղում երեխա չի ծնվել: Անցյալ շաբաթ երկու մարդ մահացավ: Մեռնողներն ավելի շատ են»:

Իսկ վերջին հարսանիքը չեն էլ հիշում, թե երբ է եղել: Վաքիֆլիի գյուղապետ Պերճ Քարտունը մտածկոտ հարցնում է. «Վերջին անգամ ո՞ւմ կարգեցինք: Երևի տասը տարի առաջ էր»: Հետո պատմում է, որ գյուղում ամուսնանալու տարիքն առած տղաներ կան, բայց աղջիկ չեն գտնում. հայաստանցիները՝ Թուրքիա, իսկ ստամբուլահայերն առահասարակ գյուղ գնալ չեն ուզում: Երևի սա է պատճառը, որ այլազգի հարսներ ունեն՝ հույն, ռուս, թուրք: Թալինն ասում է՝ լավ չէ, բայց դե ի՞նչ արած, եթե իրար սիրում են:

Այնքան վաղուց հարսանիք չեն արել, որ չեն էլ հիշում՝ հայկական ավանդույթներով են անում, թե՞ ոչ: Թալինը միայն պատմում է, որ հարսանիքներին թուրք երաժիշտների են կանչում, հայ երաժիշտներ չկան:

Հայերի «թանգարանը»՝ Վաքիֆլին էլ աստիճանաբար թուրքացվում է:

Փաստորեն ինչքան հեշտ է բարեկամ լինել

Հաբբը Օզդալ

«Ռադիկալ» օրաթերթ
02.06.2011

Մեծ հրապարակներ, փողոցներում երիտասարդների համար համերգներ, խոսքի ազատությանը նվիրված երեկոներ... Երևանում կյանքը ոչ թե անցյալ, այլ դեպի ապագա է հոսում:

Երևակայությունից դեպի իրականություն

Մայիսին երկու շաբաթից ավելի տևած Թուրքիա-Հայաստան ավտոբուսային մի շրջագայությունից վերադարձիս օրը մեր խմբագիր Էյուփ Ջանը գրել էր «Երևակայությունն սրանց համար, ում վերքերը չեն փակվել» վերնագրով հոդվածը: Մեծ ոգևորությամբ տոգորված՝ նոր էի վերադարձել Երևանից, երբ հանդի-

պեցի «Վարչապետը տեղահանության ժամանակ կոտորվածների գերեզմանին մի զույգ մեխակ կղևի և կասի՝ կիսում ենք ձեր ցավը»՝ երևակայության հիման վրա գրված այս տողերին, որից հետո իմ հույսն ու խիզախությունն ավելացավ: Իմ այս հրապարակման անունն էլ այդ հոդվածն է ներշնչում. «Երևակայությունից դեպի իրականություն...»:

Ստամբուլի մշակույթի համալսարանի Գլոբալ քաղաքական միտումների կենտրոնի (GPOT), Երևանի մամուլի ակումբի և «Ինտերնյուս Հայաստան»-ի կողմից հայ և թուրք լրագրող-

27 Mayıs 2011 Cuma

18 Gündem

Aslında dost olmak



daha güçlü -ve dramatik- bir du...
den söz ettile...

ների մասնակցությամբ իրականացված այս ավտոբուսային շրջագայությունը շատ արդյունավետ անցավ: Երկու հասարակությունների միջև ողբերգական պատմական խնդրի ելակետը համարվող Ադանայի Քոզանից (Սիս-խմբ.) սկսված, Անթաքիայով, Ուրֆայով, Դիարբեքիրով, Վանով և Կարսով անցած այս շրջագայությունը Վրաստանի վրայով ավարտվեց Երևանում: Ես մեր գնացած ճանապարհի հակառակ ուղղությամբ կգրեմ: Կսկսեմ Երևանից, որի զգացողությունները դեռ տաք են, այնուհետ կանդրադառնամ Հայաստանի մյուս բնակավայրերին և վերջում էլ՝ Թուրքիայի հատվածին:

Հայաստանը 3 մլն բնակչությամբ, փոքր մի երկիր է: 1915-ից հետո աշխարհի չորս կողմը սփռված և Սփյուռք կոչվող միլիոնավոր հայերի կողքին այս թիվը բավականին համեստ է: Չնայած դառնություններով լեցուն պատմական իրադարձություններին, տնտեսական և քաղաքական խնդիրներին, հայաստանցիները լեցուն են հայ-

րենիքի հանդեպ սիրով և քինախնդիր չեն: Երկրի մյուս հատվածների համեմատ հակադիր պատկերով Երևանը Հայաստանի գլուխն ու սիրտն է՝ հսկա Հանրապետության հրապարակով, քաղաքի ամեն հատվածում իրենց գոյությունը շարունակող պատմական շինություններով, գեղեցիկ կանանցով և կենսուրախ երիտասարդներով:

Շատ հաշտակ էինք, քանի որ Վրաստան-Հայաստան հատվածում մենք մի հրաշալի ուղեկցող ունեինք՝ Միքայել Յովհաննիսյանը: Նրա հետ կապված մանրամասները վաղը կպատմեմ: Սակայն սա կարևոր է: Միքայելն Արևելյան Հայաստանի պատմությունը երբեմն ուրախ հեքիաթի, երբեմն էլ շատ լուրջ ձևով էր մեզ ներկայացնում: Սակայն նրա պատմություններում Արևմտյան Հայաստանի հայերի հետ կապված սարսափելի հատվածներ կային. «մի ժամանակ...»: Դրանից հետո նա փորձում էր նուրբ հումորի օգնությամբ ցրել ստեղծված լարված իրավիճակը: Սակայն, զարմանալիորեն, այդ սարսափելի իրադարձությունների հետքերը զգացվում էին բոլոր հայերի սրտերում:

Մայրաքաղաքում և մյուս վայրերում մեր հանդիպած գրեթե բոլոր լրագրողները խոսում էին գրաքննությունից, նույնիսկ ավելի ուժեղ և դրամատիկ իրավիճակ հանդիսացող ինքնագրաքննությունից: Հայաստանը ժողովրդավարության հետ կապված լուրջ խնդիրներ ունի: Խոսքի ազատության դեմ կան արգելքներ, իսկ



լրատվամիջոցները ճնշվում են իշխանությունների կողմից: Այս իրավիճակը երկրում մի քանի ելք է ստեղծել: Դրանցից մեկը հզոր հումորն է: Մարդիկ պատրաստ են ծիծաղել և ծիծաղեցնել: Շրջագայության ընթացքում մեր հայ բարեկամները սկսել էին հասկանալ թուրքերենով արված հումորները և նույնիսկ իրենք էին սկսել թուրքերենով հումորային արտահայտություններ անել: Պատմաբան, Կիլիկիայի մասնագետ Հայկակ Արշամյանը երկու հասարակությունների նմանությունները ներկայացնելիս օգտագործում էր նաև թուրքերենով հումորային արտահայտություններ:

Ժողովրդավարության պակասի ազդեցությունը Հայաստանի մամուլի վրա այնքան էլ հաճելի չէ: Ինքնագրաքննություն-գրաքննություն իրականացնելու հետեվանքով մամուլը զգալիորեն կորցրել է ժողովրդի վստահությունը: Թերթերը շատ քիչ են վաճառվում: Սակայն այս վիճակն էլ երկու ոլորտ է ուժեղացրել՝ տեղական և ինտերնետ մամուլը: Բոլոր քաղաքներում էլ կան ուժեղ և ազդեցիկ տեղական թերթեր և հեռուստաընկերություններ: Նրանք էլ նմանատիպ քաղաքական մրթնուղորտի մեջ են, սակայն լավ գիտեն և հաճախ են օրակարգ բերում տեղական խնդիրները: Իսկ Հայաստանում ծագող աստղն՝ օնլայն մեդիան է:

Հայաստանում ինտերնետի մենաշնորհի վերանալուց հետո գներն իջել են, և ինտերնետը մեծ արագությամբ լայն տարածում է գտել: Երիտասարդները հան-

դիպում են Facebook-ում և մյուս սոցիալական կայքերում: Թերթերը գնալով իրենց դիրքերը զիջում են լրատվական կայքերին: Զորս լեզվով լուրեր հրապարակող news.am լրատվական գործակալության թուրքերենով լուրեր գրող Անդրանիկ Իսպիրյանը սահուն թուրքերենով բացատրում է, որ ինտերնետի մատչելիությունը մամուլին ուղղորդել է դեպի համացանց:

Հայաստանում չմոռացվող ցավի ստվերը ամեն պահ և ամեն տեղ քո դիմաց է հայտնվում: Երբ հայերն իմանում են, որ թուրք ես, նախ զարմանում են, որից հետո առանց թշնամության անդրադառնում են 1915-ի խնդրին: Սակայն այդ ամենն՝ առանց հաշիվ պահանջելու ու առանց քինախնդրության: Հայերը ցանկանում են, որ անցյալը իմացվի և ճանաչվի, սակայն նայում են ապագային: Նոր պողոտաներ են կառուցում, փնտրում են ճանապարհներ՝ ավելի շատ արտադրելու և հարստանալու: Աշխատասեր ազգ լինելու էներգիան դրական ուղղությամբ են օգտագործում և արագորեն զարգանում:

Սակայն այդ զարգացման ամենալուրջ արգելքներից մեկն էլ Թուրքիայի հետ սահմանի փակ լինելն է: Այդ պատճառով, երբ խոսում ես կրթված հայերի հետ, Ցեղասպանության խնդիրը քննարկելու հետ մեկտեղ, երբեմն էլ ավելի շատ՝ խոսում են փակ սահմանի և սառեցված արձանագրությունների մասին: Ցեղասպանություն, սահման և արձանագրություններ...

Մեկ օր Ցեղասպանության հուշահամալիրում

Ցեղասպանության հուշահամալիրն ու թանգարանը երկրի ամենակարևոր խորհրդանիշներից են: Ոչ միայն ապրիլի 24-ին, այլ ամեն օր այնտեղ այցելուներ կան: Համարյա բոլոր զբոսաշրջիկներն այցելում են հուշահամալիր և ծաղիկներ են դնում: Հետաքրքիր էր, որ հուշահամալիրի և թանգարանի շրջակայքում ծաղիկներ չէին վաճառում: Ծաղիկները քաղաքից էին գնում և հետները բերում: Մեր հայաստանցի գործընկերները քաղաքավարությամբ հարցնում են՝ «Կցանկանա՞ք գնալ հուշահամալիր»՝ պատրաստ հասկանալ և լսել մեր «ոչ»-ը: Իհարկե, գնում ենք: Տխուր երաժշտության և մարմինը փշաքաղեցնող բացարձակ լռության ներքո իմ ձեռքի սպիտակ մեխակները հավերժական կրակի մոտ են դնում, փակում աչքերս և սգում 1915-ը....»:

Թուրքերենով հետաքրքրված Անդրանիկ

Անդրանիկ Իսպիրյանն ավարտել է թուրքագիտության բաժինը: Համալսարանում թուրքերեն է դասավանդում: Ընտանիքի արմատները Մուշից են: Երևում է, որ հայաստանում կրթական և գիտակցական մակարդակի բարձրացումով հանդուրժողականության և երկխոսության համար պլատֆորմն էլ է բարձրացել: Ցավոք, այս խնդրի հետ կապված իրավիճակը Թուրքիայում կարծես հակառակը լինի: Անդրանիկը Թուրքիան մոտիկից է ճանաչում: Նույնիսկ լինում էր, երբ ինչ որ

թուրք պաշտոնյայի անուն չէինք հիշում, խորհրդակցում էինք Անդրանիկի հետ: Նա թղթակցում է news.am լրատվական գործակալությանը: Նաև թուրքերենով լուրեր թողարկող այս կայքը երկու երկրների միջև երկխոսության զարգացման կողմնակիցներից է:

Կենսուրախ պատմաբան Հայկակ Արշամյանը

Շրջագայության ամենապայծառ դեմքերից մեկը՝ Երևանի մամուլի ակումբից պատմաբան, Կիլիկիայի մասնագետ Հայկակ Արշամյանն էր: Նա հատկապես Ադանա-Հաթայ տարածաշրջանում նույնիսկ լեռների ամեն մի քարին ծանոթ էր: Հայաստանում նա երկու երկրների ժողովուրդների միջև առողջ ապագայի ճանապարհի փնտրողներից է, ով Անատոլիայում հայերի պատմության հետ կապված իրադարձությունները սառնասրտորեն է քննարկում: Առանց իր կենսուրախությունից հրաժարվելու՝ կարողանում է նույն պահին առերեսվել թե՛ փոշիացած հայկական մշակույթի դառնության հետ, թե՛ այդ հողերում այս պահին ապրող մարդկանց խնդիրների հետ: Նա նույն մանրամասնությամբ ուսումնասիրեց թե՛ Քոզանի կիսավեր բերդն ու Սաբանջը մզկիթը, թե՛ Վանի Ուրարտուի բերդն ու ներսում թագավորների գերեզմանները, և թե՛ Իսհաք փաշայի պալատը:

Երազների քաղաք Դիարբեքիրը և մի կաթիլ մեղրի պատմությունը

Քրիստինե Աղալարյան

«Հետք» առցանց պարբերական
20.05.2011

Ռեջեփը կամ Նույն ինքը՝ Արամ Խաչիկը

Ռեջեփը կամ Արամ Խաչիկը Դիարբեքիրի հատուկներտ հայերից է, ով չի խուսափում խոստովանել այդ փաստը: Նրան հանդիպեցինք Դիարբեքիրի հայկական կաթոլիկ եկեղեցում, որը վերականգնման փուլում է: Ռեջեփը եկեղեցու անվտանգության աշխատակիցն է, պահակություն է անում գիշերները:

Ռեջեփի հայրը հայ է, մայրը՝ մահմեդական: «Հոգով քրիստոնյա եմ, արտաքինով՝ մուսուլման, բայց հոգով ես ինձ հայ եմ համարում», - ասում է նա: Հինգ երեխա ունի, որոնցից երկուսին հայ նախնիների անուններով է կոչել՝ Խաչիկ և Վազգեն:

Իսկ իր անունը՝ Արամ, ինքն է կնքել: Ռեջեփն ասում է, որ

Դիարբեքիրում ևս երեք հայ ընտանիք կա, բայց մեծ մասն արդեն հեռացել է քաղաքից, մյուսներն էլ պահը բաց են թողել. չեն խոստովանում, որ հայ են:

Դիարբեքիրում ներկայումս ապրող հայերի մասին վիճակագրական տվյալներ չկան: Այդ մասին ցավով նշեց նաև Դիարբեքիրի քաղաքապետ Օսման Բայրեմիրը:



Ինչ է ասում պատմությունը

Հարավարևելյան Անատոլիայում՝ Տիգրիս գետի աջ ափին է տարածվում բազմամշակութային քաղաք Դիարբեքիրը (Տիգրոսակերտը), որտեղ 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին կեսին ապրել է շուրջ 10-15 հազար հայ (բնակչության ընդհանուր թիվը 50 հազար էր): Պատմական աղբյուրների համաձայն՝ 1895-ի համիդյան ջարդերի ժամանակ ավելի քան 3000 հայ է կոտորվել, 1915-ին՝ մոտ 5000:

1882թ. տվյալներով՝ Դիարբեքիր նահանգի հայ բնակչության թիվը 150 հազար էր: 1914թ. նահանգում հայերը կազմել են 105 հազար, քանզի 1895թ. ջարդերի ժամանակ սպանվել են հազարավոր հայեր, մի մասն էլ արտագաղթել է: Մեծաթիվ են եղել նաև քրդերը՝ 55 հազար, հույներն ու ասորիները՝ 60 հազար, այլք՝ 31 հազար: 1915թ. Ցեղասպանության ժամանակ թուրքական կառավարությունը Դիարբեքիրի նահանգից տեղահանել ու բնաջնջել է շուրջ 100 հազար հայ: 1975թ. տվյալներով՝ նահանգում ապրել է շուրջ 4000 թրքախոս հայ բնակիչ: Այժմ Դիարբեքիրը մեծամասամբ, շուրջ 90%-ով բնակեցված է քրդերով: Քաղաքի կառավարումը նույնպես նրանց ձեռքում է:

Դիարբեքիրի քաղաքապետն ազգությամբ քուրդ է և քրդական «խաղաղություն և ժողովրդավարություն» կուսակցության անդամ: Ինչպես ինքն է հավատացնում՝ ցանկանում է վերականգնել Դիարբեքիրի բազմամշակութային դեմքը:

Երազների քաղաք Դիարբեքիրը

Դիարբեքիրը 26 մշակույթների քաղաքակրթությունների օրրան է եղել: Այդ մասին վկայում է նաև քաղաքապետարանի հրատարակած «Երազների քաղաքի»՝ Դիարբեքիրի մասին գիրքը: Այստեղ կողք կողքի ապրել են հայերը, արաբները, ասորիները, եզդիները, լազերը, քրդերը և այլ ժողովուրդներ:

Վահանձուկի նման քաղաքը պաշարող 5 կմ երկարությամբ, 12 մետր բարձրությամբ և 82 աշտարակ ունեցող պատը չինական պատից հետո երկրորդն է աշխարհում, որի վրայի արձանագրությունները, քանդակներն ու պատկերները խորհրդանշում են այդ բազմամշակութայնությունը և վկայում առնվազն 12 քաղաքակրթությունների մասին:

Դիարբեքիրի քաղաքապետ Օսման Բայդեմիրը ցավով է նշում, որ երբեմնի հարուստ մշակույթ ունեցող քաղաքը կորցրել է իր բնակիչներին՝ հայերին, եզդիներին, սիրիացիներին, քրդերին և այլ ազգերի ներկայացուցիչներին, որոնք թուրքական պետության վարած քաղաքականության պատճառով ստիպված են եղել լքել Դիարբեքիրը:

«Նրանց հեռանալուց ի վեր մենք էլ կորցրինք մեր խաղաղությունը: Աղքատացանք», - ասում է նա: Քաղաքապետը համոզված է, որ Դիարբեքիրը միայն մուսուլմաններինը չէ, այն նաև հայկական ու սիրիական քաղաք է՝ իր ճարտարապետությամբ ու մշակութային կոթողներով:

«Դիարբեքիի դռները բաց են բոլոր դիարբեքիցիների համար, ովքեր հեռացել են քաղաքից: Ով ցանկություն ունի՝ կարող է վերադառնալ», - ասում է քաղաքապետը: Նա վստահեցնում է, որ իրենք ամեն ինչ անում են հեռացածների վերադարձի և եղածի պահպանության համար պայմաններ ստեղծելու ուղղությամբ:

Վառ օրինակը հայկական Սուրբ Կիրակոս և կաթոլիկ (Միջին Արևելքի ամենամեծ կաթոլիկ եկեղեցին է) եկեղեցիների վերանորոգումն է: Քաղաքապետը վստահեցրեց, որ Սուրբ Կիրակոսն անպայման խաչ կունենա, իսկ բացմանն անակնկալներ կլինեն:

2010թ. սկսել են վերանորոգել կաթոլիկ եկեղեցին, և ինչքան շուտ ֆինանսավորում հատկացվի, այնքան արագ կավարտվի վերանորոգումը:

Պահակ Ռեջեփը հավաստիացրեց, որ ամբողջությամբ պահպանվել է կառույցի նախկին տեսքը: Դա շատ կարևոր հանգամանք է, քանի որ երբ հայեր են գալիս Դիարբեքի, պարտադիր այցելում են եկեղեցի:

Մշակութային «աղբատացմանը» զուգահեռ՝ Դիարբեքիը տնտեսապես էլ է անկում ապրել: Մինչ 1927թ. Դիարբեքիը, Ստամբուլից ու Բուրսայից հետո, տընտեսապես զարգացած երրորդ քաղաքն է եղել իր արդյունաբերությամբ, գործարաններով ու արտադրության ցուցանիշներով: Այժմ Դիարբեքիը 65-րդն է: 2010թ. քաղաքի տարեկան բյուջեն 60 մլն

եվրո էր: Ստամբուլի բյուջեն 17 մլրդ եվրո է: Քաղաքապետը համեմատում է. Ստամբուլի բնակչությունը Դիարբեքիի բնակչությունից 17 անգամ է շատ, իսկ բյուջեն՝ 300 անգամ:

«Մի կաթիլ մեղր»-ի պատմությունը

Դիարբեքիի Սուր թաղամասի ղեկավար Աբդուլլա Դեմիրբաշը Դիարբեքիը ծաղկաստանի հետ է համեմատում, որտեղ բազմապիսի ծաղիկներ են աճում, և յուրաքանչյուր ծաղիկ իր գույնն ունի: Սուրի թաղապետը կարծում է, որ ժողովուրդները, չնայած լեզվական կամ կրոնական տարբերությանը, նույն այգու ծաղիկներ են: Ծաղիկների գույների բազմերանգությամբ մեկ ընդհանուր պատկեր է կազմվում: Եթե մի ծաղիկը կամ պատկերի մեկ գույնը վնասվի, կնշանակի, որ ողջ պատկերն է փոխվում, այսինքն՝ վնասվում է նաև ողջ մարդկությունը:

«Եվ որպես քուրդ ծաղիկ, ես ուզում եմ ապրել այս այգում՝ ինչպես մյուս ծաղիկները, որովհետև այս այգում բոլորիս համար տեղ կա», - ասում է թաղապետը՝ անդրադառնալով նաև քրդական հարցին: Նա կարծում է, որ դա դժվար է, բայց նաև հասկանում է, որ շատ գեղեցիկ բան է, հետևաբար՝ պայքարն անհրաժեշտ է:

Ի հեճուկս միատարրության սկզբունքի՝ Սուրի թաղապետարանը ջանում է տեր կանգնել տարբեր ազգերի ներկայացուցիչների լեզվին, կրոնին և մշակույթին: Թաղապետի նախաձեռնած հարցումների արդյունքում պարզվել է, որ քաղաքի

բնակչության 73%-ը խոսում է քոդերեն, 24%-ը՝ թուրքերեն, 1%-ը՝ արաբերեն, մնացած 3%-ը՝ հայերեն և այլ լեզուներով: Այս արդյունքները ստանալուց հետո Դեմիրբաշը որոշել է թաղապետարանի ծառայությունների մատուցումը դարձնել մի քանի լեզուներով, այդ թվում նաև հայերեն: Դրա հետևանքով Աբդուլլա Դեմիրբաշը դատապարտվել է Սահմանադրությունը խախտելու մեղադրանքով: Սակայն Դեմիրբաշը շարունակել է տարբեր լեզուներով գրքույկներ և հանդեսներ տպագրել ու տարածել:

Սուրի թաղապետարանն այս տարի հրատարակել է երեխաների համար նախատեսված հայերեն և թուրքերեն հեքիաթների գիրք: Սա առաջին դեպքն է Թուրքիայում, երբ թաղապետարանը հայերեն գիրք է հրատարակում:

Սուրի թաղապետն ասում է, որ հայերեն հրատարակված հեքիաթների ցանկում Յովհաննես Թումանյանի «Մի կաթիլ մեղր»-ի պատմությունն ընդգրկելը պատահական չէ. այն ոչ թե կռվի, այլ համերաշխության խորհրդանիշ պիտի լինի Թուրքիայում ապրող տարբեր ազգերի ու կրոնների հավասարության ու եղբայրության համար:

Դիարբեքիի մասին հայերեն գրքույկ ևս կա: Ունեն նաև ուսանողական ամսագիր, որը տպագրվում է երեք ամիսը մեկ՝ 6 լեզվով, այդ թվում նաև հայերեն: Աբդուլլա Դեմիրբաշը համոզված է, որ յուրաքանչյուր ազգի ներկայացուցիչ պետք է հնա-

րավորություն ունենա կրթություն ստանալ իր մայրենի լեզվով:

Թաղապետն ասում է, որ այն մարդիկ, ովքեր հավատում են ժողովրդավարությանը, պետք է հարգեն և պայքարեն մյուս ժողովուրդների մշակույթի համար: Չնայած 23 գործ է հարուցված իր դեմ, մոտ մեկ տարի առաջ ձերբակալված է եղել, 5 ու կես ամիս էլ բանտում է անցկացրել, իր ընկերները ցայսօր բանտերում են, ավելի քան 2000 քուրդ գործիչ նույնպես Թուրքիայի բանտերում է, այդուհանդերձ, դա չի խանգարում շարունակել պայքարը: Աբդուլլա Դեմիրբաշը հասկանում է, որ Թուրքիայում կոնֆլիկտի միակ պատճառը մեկ մշակույթի, մեկ լեզվի և մեկ ինքնության գերիշխանության պաշտոնական գաղափարախոսությունն է:

«Բայց մենք հավատում ենք, որ կապրենք բազմամշակութայնության մեջ, քանի որ այստեղ բոլորը չէ, որ մուսուլման են, - ասում է Սուրի թաղապետը և շարունակում,- ես ուզում եմ լինել Թուրքիայի իրավահավասար քաղաքացի, բայց ես թուրք չեմ: Սա նույնն է հայերի, սիրիացիների, եզդիների համար: Ես վճարում եմ հարկեր, ես ծառայում եմ բանակում: Մենք ուզում ենք մասնակցել մեր մասին որոշումների կայացմանը»:

Տարբեր տեղեր ենք գնացել, եղբայր

Այսել Յաշա

«Յենի Շաֆակ» օրաթերթ
25.05.2011

Թուրքիա - Հայաստան հարաբերությունները զարգացնելու համար 8 թուրք և 8 հայ լրագրող սկսեցինք միասին ճամփորդել: Շրջագայության առաջին շաբաթն անցկացրեցինք Թուրքիայի արևելքում: Իրենց պապերի հետքերը փնտրող հայ լրագրողներն ամբողջ շրջագայության ժամանակ նույն նախադասությունն էին ասում. «Tarber teğər enk çnatsel eğbayr»:

Շրջագայությունը Թուրքիայում սկսվեց Ստամբուլից՝ անցնելով Ադանա, Անթաթիա, Շանլըուֆա, Դիարբեքիր, Վան և Կարս քաղաքներով: Հետո շարունակեցինք Վրաստանի Ախալցխայով՝ անցնելով Գյումրի, Ալավերդի, Երևան և Մեղրի քաղաքներով: Ընդհանուր առմամբ, անցանք 4 հազար կիլոմետր: Խմբի հայ լրագրողների ընտանիքների մեծ մասը գաղթել էին Մուշ, Երզրում, Կարս և Վան քաղաքներից: Իրենց պապերի հետքերը Անատոլիայում փնտրող լրագրողներն աշխատում էին պարզել այն օրերին տեղի ունեցած ողբերգության մանրամասները: Մեկը սովորած մի քանի թուրքերեն բառերով էր փնտրում իր նախնիներին, մյուսը՝ թվարկում էր իր իմացած քաղաքների անունները՝ քննարկելով անցյալի իրա-

դարձությունները: Մենք էլ հանուն Թուրքիա - Հայաստան բարեկամության երկար ճանապարհ ընկանք և այդ ամբողջ ժամանակահատվածում մեր հայ գործընկերների հետ անցկացրեցինք: Ահա, տող առ տող գրում եմ այդ օրերի իմ հետևությունները:

Երանի սահմանները վերանան

Մեր առաջին կանգառն Ադանան է: Ուսումնասիրում ենք 1909 թվականի իրադարձություններից հետո Ադանայից բռնազաղթած հայերի հետքերը: Մեր ուղղությունը հայտնի է՝ Քոզանի (Սիս-խմբ) շրջան: Մի ժամանակ այդ շրջանում մեծ թվով հայեր են ապրել: Սակայն նրանցից մնացել է միայն մի եկեղեցի: Դա էլ կառուցված է լեռան վրա և հեշտությամբ հնարավոր չէ հասնել: Մեքենայի համար նորմալ ճանապարհ չլինելու պատճառով հայ լրագրողները պարզապես հեռվից ողջունեցին և հեռացան Քոզանից: Մեր հայ գործընկերները տխուր էին, որ չկարողացան այցելել եկեղեցի, սակայն կարծես նրանք սփոփվեցին այն փաստով, որ նախկինում այստեղ հայեր են ապրել: Մայիսի 4, 2011 թվական: Մեր շրջագա-

յուրթյան երկրորդ օրն է: Այն քաղաքը, որ մենք գնալու ենք, քաղաքակրթությունների խճանկար է: Այն կարող է աշխարհին օրինակ ծառայել, թե ինչպես են միասին խաղաղության մեջ ապրում տարբեր ազգեր ու ռասաներ: Այո, խոսքս Անթաքիայի մասին է: Հայ լրագրողների համար բավականին կարևոր մի քաղաք է, քանի որ այստեղ դեռ գոյատևում է հայերով բնակեցված միակ գյուղը՝ Վազըֆլըն: 1915-ից հետո մնացած միակ գյուղն է: Մուսա լեռան վրա պատսպարվածների մի մասը հետ է վերադարձել այս գյուղ, և ներկայումս այստեղ ապրում է 135 մարդ: Երիտասարդների մեծ մասը կրթությունն ստանալու համար հեռացել է գյուղից, մի մասը՝ Ամերիկա, Կանադա կամ Գերմանիա: Գյուղում մնացածներն ապագայի հանդեպ մտավախությամբ՝ երեխաներ չեն ունենում: Գյուղն իր հնարավորության սահմաններում եկեղեցի է կառուցել, սակայն դեռևս հոգևորականներ չկան: Կրոնական միջոցառումներն իրականացնում են Ստամբուլից եկած հոգևորականները: Մանրամասն շրջագայությունից հետո հյուրընկալվում ենք Անթաքիայի խորհրդանիշներից մեկը հանդիսացող «Քաղաքակրթությունների երգչախմբին»: Երգչախմբի ղեկավարը Նշում է. «Երբ քաղաքական գործիչները Հայաստանի հետ հարցերը կարգավորեն, և սահմանները բացվեն, կցանկանանք Հայաստանում համերգ կազմակերպել: Երաժշտության մեջ սուտ չկա, սրտանց ենք ցանկանում»:

Երգչախմբում բոլորի ցանկությունը նույնն է. «Երանի սահմանները վերանան»:

Բոլորս նույն այգու ծաղիկներն ենք

Շրջագայության 4-րդ օրը մենք գալիս ենք Դիարբեքի: Դիարբեքիի քաղաքապետ Օսման Բայդեմիրն ընդունում է լրագրողների պատվիրակությանը: Դիարբեքիին այն նահանգներից մեկն է, որտեղ 1915-ից առաջ մեծ թվով հայեր են ապրել: Չնայած հիմա շատ քիչ հայ ընտանիքներ են ապրում, սակայն քաղաքում հայերի հետքե-



Իկ դուրգւմզ Ադանա. 1909 օլայլանմա շիհրեն գօչ Ետեք շորունմա կալան Երմենլերն ալակ իզերլն տ Եդլորւշ. Րօտամշ Բեղլլ: Կօզան իլժեթ. Իր Բօնեմ Բիրժօք Երմենլ յատնաժաւմազն յաժաճլլ Բու Բօլղե Ե Գերլշե սաճեք Բիր կալեթ Կալմաշ. Օ Եւ Եւրաթն շերլն Ինժա Եղաճլլլ իճն կօլայ շալաթլմալոր. Արաբա իճն Եւ Բու յաճաճլլ իճն Երմենլ ցազեթլլք Եւ ճօղօք Ինժալտն Եւ ճօղօք Եւ ճօղօք Եւ ճօղօք Կօզանիճն. Երմենլ

րը չեն վերացել: Այժմ Դիարբեքիրի Սուրբ Կիրակոս եկեղեցին վերանորոգվում է քաղաքապետարանի կողմից: Դիարբեքիրի քաղաքապետն իր խոսքը սկսում է նրանով, որ կարոտել է բազմալեզու և բազմակրոն Դիարբեքիրին և շարունակում. «Այս մեծ քաղաքը շատ արժեքներ է կորցրել: Եզդիները, հայերը, ասորիները ստիպված հեռացել են: Նրանք մեծ տառապանքներ քաշելով են հեռացել, իսկ մենք՝ այստեղ մնացածներս, չենք կարողացել երջանկանալ: Մշակութային առումով աղքատացել ենք»: Բայդեմիրը նշում է, որ հայերի համար իրենց դռները միշտ


բաց են և կրկին բաց տեքստով հրավիրում է հայերին՝ հույսով, որ մի օր նրանք կվերադառնան: Հաջորդն այցելելու ենք հայերենով Դիարբեքիրի ուղեցույցը պատրաստած Սուրի քաղաքապետ Աբդուլլա Դեմիրբաշին: Դեմիրբաշը, ում հայաստանցիները մոտիկից գիտեն, դրական է գնահատում Թուրքիա-Հայաստան բարեկամության նախագիծը և շարունակում. «Ժողովուրդների միջև չպետք է խնդիրներ լինեն: Բոլորս նույն այգու ծաղիկներն ենք: Թեկուզ մեր հավատը և լեզուն տարբեր են, այս այգում բոլորիս համար էլ տեղ կգտնվի»:

Շրջագայության Թուրքիայի մասն ավարտվում է Կարսով: Նախ այցելում ենք Հայաստա-

նին սահմանակից Անիի ավերակներ: Խըմբի հայ լրագրողներից մեկն ասում է. «Գիտեինք, որ Հայաստանը Կարսից երևում է սակայն այստեղից նայել մեր երկրին՝ լրիվ ուրիշ զգացողություն է: Երբ մի օր սահմանները կբացվեն, մենք մեկս մյուսի երկրին ավելի հանգիստ կարող ենք նայել»:

Ադանայից հրավեր հայերին

Մեր խումբն Ադանայում այցելեց Ադանայի երիտասարդ գործարարների միություն: Միության նախագահ Հաբան Չելիքը ուշադրություն դարձրեց այն հանգամանքի վրա, որ երկու երկրների սահմանների բացումով տնտեսական աշխուժություն կստեղծվի: Չելիքն ասաց, որ ցանկանում է հայ լրագրողներին կրկին տեսնել Ադանայում:



Հայկական եկեղեցիներ

Սոնա Քոչարյան

«Երկիր Մեդիա» հեռուստաընկերություն
13.09.2011

Վերջերս թուրքական կառավարությունը հաճախ է խոսում հայկական պատմական հուշարձանների և եկեղեցիների վերականգնման աշխատանքների մասին: Սակայն եկեղեցիներն ավելի հաճախ վերականգնվում են ոչ թե որպես հոգևոր կենտրոններ, այլ պարզապես պատմական կոթողներ՝ սրբավայրից վերածվելով թանգարանի: Առավել ևս, դրանք չեն վերադարձվում իրական տիրոջը՝ Հայոց Պատրիարքությանը: Առաջին անգամ է, երբ պետությունը գումարներ է հատկացնում գործող և համայնքին պատկանող եկեղեցու վերականգնմանը:

Պոլսո Հայոց Պատրիարքարանի դիմաց գտնվող երեք եկեղեցիներից մեկում՝ Որդվոց Որոտմանում, այսօր շինարարական աշխատանքներ են ընթանում: Հարյուր տարվա ընդմիջումից հետո, շուտով այստեղ կրկին պատարագ է մատուցվելու:

Հռչակավոր Պալյան գերդաստանի անդամներից մեկի՝ ճարտարապետ Գրիգոր Ամիրա Պալյանի կողմից 1828 թվականին կառուցված Որդվոց Որոտմանը վերականգնվելու ընթացքում ճարտարապե-

տական որևէ փոփոխության չի ենթարկվի: Ճարտարապետական այս կոթողի վերականգնման աշխատանքները սկսվել են դեռևս Նախորդ տարվա հոկտեմբեր ամսին: Նախատեսված է, որ եկեղեցու դռները կրկին բացվելու են այս տարվա հունիսի կեսերին:

Որդվոց Որոտմանի վերանորոգման աշխատանքներն իրականացվում են «Ստամբուլը 2010 թվականի Եվրոպայի մշակույթի մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում: Ծախսերի 70 տոկոսը հատկացրել է պետությունը, իսկ մյուս 30 տոկոսը՝ Գումգափոի հայկական եկեղեցու հիմնադրամը: Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ սա առաջին դեպքն է, որ կառավարությունը ֆինանսավորում է հայկական համայնքին պատկանող եկեղեցու վերանորոգման աշխատանքները:

«Եկեղեցու վերանորոգման աշխատանքների համար հատկացվել է մոտ 1,5 միլիոն դոլար, իսկ աշխատանքները գտնվում են պետնախարարի մշտական ուշադրության կենտրոնում»,- ասում է եկեղեցու վերանորոգման աշխատանքների ղեկա-

վար, ճարտարապետ Գևորգ Քարազյոզյանը:


Վերաբացվելուց հետո եկեղեցին ծառայելու է նաև որպես մշակութային կենտրոն՝ պահպանելով սրբավայր լինելու իր նշանակությունը: Այստեղ կանցկացվեն եկեղեցական արարողություններ, կլինի նաև մոմ վառելու հատուկ տեղ:

Ստամբուլի հայկական եկեղեցիները մի տեսակ տարբերվում են հայկական ավանդական եկեղեցու ճարտարապետական ոճից: Գևորգ Քարազյոզյանը մեկնաբանում է, որ Օսմանյան կայսրության շրջանում Պոլիսը հունական ոճով կառուցված քաղաք էր, և հայկական եկեղեցիների ճարտարապետները ստիպված են եղել ընտրել բազիլիկ ոճը: Իսկ Որդվոց Որոտմանի առանձնահատկություններից մեկն այն է, որ եկեղեցու կառուցման աշխատանքներում մեծ քանակությամբ փայտ

է օգտագործվել: Փայտի աշխատանքները ղեկավարում է 70-ամյա վարպետ Օսիկը: Վաթսուն տարվա աշխատանքային փորձը վարպետին հպարտանալու առիթ է տալիս:

«Ստամբուլում քանի եկեղեցի կա՝ ձեռքս տված եմ, բան մը շինած եմ, քանի դրպրոց կա՝ բան մը շինած եմ, հայկական դպրոցները, ամենն ալ՝ 32 հատ, բոլորին էլ ձեռքս տված եմ», - ասում է վարպետ Օսիկը:

Վարպետ Օսիկն ապրում է Ստամբուլում, բայց երազում է Երևանում տուն կառուցելու մասին: Ասում է, որ այդ տան դուռն էլ իր ձեռքով է շինելու: Ինչ վերաբերում է Որդվոց Որոտմանին՝ վարպետն ուրախ է, որ եկեղեցին հայերին է եղել ու շարունակելու է հայերիըը մնալ:



Կարսում

Անդրանիկ Իսպիրյան

NEWS.AM

10.05.2011

Թուրքիայի Կարս քաղաքի «Մարդկության հուշարձանի» ապամոնտաժման աշխատանքները չեն դադարում նույնիսկ անձրևային եղանակներին: Քանդման աշխատանքներն իրականացնող «Աֆշին» ընկերության ներկայացուցիչներն այս հանգամանքը բացատրում են նրանով, որ իրենք ամեն եղանակի էլ աշխատում են, որպեսզի հասցեն ժամկետին իրականացնել ապամոնտաժումը՝ միաժամանակ ջանալով քանդված հատվածներն անվնաս հասցնել քաղաքապետարանի պահեստ:

«Մարդկության հուշարձանի» ապամոնտաժման աշխատանքների պատասխանատու Ռեհս Բարաթչը, ով 2009-ին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում Կարսի քաղաքապետի թեկնածու էր՝ իսլամիստ-ազգայնական դիրքորոշմամբ հայտնի «Բարգավաճում» կուսակցությունից, որի մի թևն առանձնացել և ստեղծել է նոր «Ժողովրդի ձայն» կու-

սակցությունը: Ռեհս Բարաթչն այս նոր կուսակցության Կարսի նահանգային կառույցի ղեկավարն է:

Այն հարցին, թե ի՞նչ զգացմունքներով են քանդում «Մարդկության հուշարձանը», Ռեհս Բարաթչը նշել է. «Ոգևորությամբ չեմ քանդում: Ուղղակի մեր ընկերությունն է շահել այս հուշարձանի ապամոնտաժման աշխատանքների իրա-



կանացման իրավունքը: Մենք մեր աշխատանքն ենք կատարում: Ես չեի ուզեմ, որ այն քանդվեր, սակայն չեի էլ ուզում, որ այն կառուցվեր»,- ասել է Քարաթոչը՝ news.am-ի թղթակցին ցույց տալով հուշարձանի ներքևի հատվածում գտնվող խարխուլ տները, որոնց տանիքներն ամբողջովին պոլիէթիլենով էին ծածկված, որպեսզի անձրևների ժամանակ ջուր չկաթա:

«Մենք 21-րդ դարում ենք ապրում, սակայն տեսնում եք, թե մարդիկ ինչպիսի պայմաններում են գոյատևում: Ինչպես կարելի է հանդուրժել այն, որ անմարդկային պայմաններում ապրող մարդկանց հարևանությամբ թանկարժեք հուշարձան կառուցվի՝ կոչվելով «Մարդկության հուշարձան»,- նշել է շինընկերության պատասխանատուն:

Փորձեցինք ճշտել, թե հուշարձանի քանդման հետևանքով որքանով կբարելավվեն այդ ծանր վիճակում ապրող մարդկանց պայմանները, չէ՞ որ նույն հուշարձանի քանդման համար 200 հազար դոլար է ծախս-

վելու, և ավելի լավ չէ՞ր լինի գումարը տրամադրել այդ կարիքավոր մարդկանց, սակայն ստացանք նույն պատասխանը. «Մենք մեր գործն ենք անում»:

Որքանով որ հաջողվեց պարզել՝ Կարսի բնակչության մեծ մասը դեմ է հուշարձանի ապամոնտաժմանը: Քանդմանը կողմ հանդես եկողների պատասխանն է. «Հուշարձանը տղեղ է և հրեշավոր, այն Կարսին չի սազում»: «Խաղաղությունը խորհրդանշող հուշարձանը չի կարելի քանդել, դա հանցագործություն է»,- նշել է հուշարձանի հարևանությամբ գտնվող թաղամասում ապրող 48-ամյա Մեհմեդը՝ շեշտելով, որ իրենք բողոքի ակցիա են արել, սակայն ոստիկանությունը ստիպել է հրաժարվել նմանատիպ քայլերից:

«Հիմա շատ են այդ հուշարձանը տեսնել ցանկացող օտարերկրացիներն ու թուրքիայի այլ վայրերից Կարս ժամանող հյուրերը: Վերջին մի քանի ամսում իմ տաքսուց օգտված գրեթե բոլոր արտասահմանցիները պատվիրել են իրենց տանել հուշարձանի մոտ: Երանի այն չքանդեմ», - ասել է Աբդուլլան, ով երկար ժամանակ է, ինչ տաքսի է վարում Կարսում:

Հիշեցնենք, որ Կարսի նախկին քաղաքապետ Նայիֆ Ալիբեյջոլուն, ով մշտապես հանդես էր գալիս հայ-թուրքական սահմանն առանց նախապայմանների բացման օգտին և դրա համար Կարսում ստորագրահավաք էր կազմակերպել, տարիներ առաջ նախաձեռնել էր հսկա արձանի ստեղծումը, որը պետք է խորհրդանշեր հայ-թուրքական բարեկամությունը և



խաղաղությունը, սակայն 2009-ին քաղաքապետի ընտրություններում նա պարտություն էր կրել: Անավարտ հուշարձանն անորոշ ճակատագրով տեղադրվել էր Կարսի հին հայկական թաղամասին կից գտնվող բարձունքում:

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Կարս կատարած այցի ժամանակ «հրեշավոր» էր անվանել հայ-թուրքական բարեկամությանը նվիրված հուշարձանը և հրահանգել՝ քանդել այն: Այդ հրահանգին անմիջապես արձագանքել էր Կարսի քաղաքապետարանը, որի խորհրդի անդամներն ընդունել էին որոշում՝ ապամոնտաժել հուշարձանը: Հուշարձանի ճարտարապետ Մեհմեդ Աքսոյը դիմել է դատարան՝ վիճարկելու քաղաքապետարանի որոշումը, բայց առայժմ դա դեռ արդյունք չի տվել:

Նայիֆ Ալիբեյոլուն մի առիթով հայտարարել է, թե հուշարձանի քանդումը կապված է մի խնդրանքի հետ: «Դա Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի խնդրանքն է: Մենք էլ Ադրբեջանից նավթի, գազի կախվածություն ունենք: Քանդման միակ պատճառը սա է», - նշել է Ալիբեյոլուն:

Հուշարձանից արդեն 5 կտոր, որոնց ընդհանուր քաշը մոտ 120 տոննա է, ապամոնտաժված է: Ապամոնտաժման աշխատանքները սկսվել են ապրիլի 23-ին:

Այստեղը վերջակետն է

Մարինե Մարտիրոսյան

«168 ժամ» շաբաթաթերթ
21.05.2011

Ստեփան Թալալյոզյուն Ստամբուլի Սկյուտար թաղամասի հայկական գերեզմանոցի տնօրենն է: Նրա պատմելով՝ ինքը երբևէ չէր էլ մտածել գերեզմանոցի տնօրեն դառնալու մասին, բայց, ինչպես հաճախ ասում են, կյանքն է ստիպել, հանգամանքներն են թելադրել:

«Ինձի համար էլ արտասովոր պաշտոն մըն է: Անանկ բան մը կա: Եթե բախտ ունիք, գերեզմանատուն կըրնաք մտնիլ, բախտ չկա՝ կայրվիք, ամեն բան կըրնա ըլլալ: Անանկ մտածել պետք է», - ասում է գերեզմանոցի տնօրենը: Գերեզմանոցը երեք աշխատակից ունի, որոնցից մեկը տնօրենն է: Վերջինս անձամբ է հոգ տանում տեղի մաքրության, ծառերի խնամքի մասին: «Ես շատ երիտասարդ եմ, քիչ մը ծեր ըլլալ է պետք

այստեղ աշխատելու համար: Բախտն ասանկ ըլլավ», - ավելացրեց տնօրենը՝ շարունակելով ծառերն էտել: Ըստ տնօրենի՝ արդեն 23 ամիս է, ինչ զբաղեցնում է գերեզմանոցի տնօրենի պաշտոնը: «Առաջին ատենները քիչ մը գեշ կզգայի: Կհարցնեին՝ ի՞նչ գործ կընիս, կըսեի՝ գերեզմանատունն եմ: Բայց մարդ էակն ամեն բանի կըրնա վարժվիլ, գեշություն չեմ ընիլ, գործ մըն է: Շատ լավ էլ պարտեզ է, թռչուններ էլ կան», - ստամբուլահայ հայտնի մարդկանց շիրմաբարերը մատնացույց անելով՝ կշռում է Ստեփան Թալալյոզյուն:



1551թ. հիմնված Սկյուտարի Սբ. Խաչ եկեղեցու գերեզմանոցն իսկական պուրակ է հիշեցնում, ուր հասնում ես վերնաալաց, նեղլիկ արահետների նմանվող ճանապարհներով: Գերեզմանոցը գտնվում է աշխույժ երթևեկով փողոցի անկյունում՝ Պահլարբաշիում: 1881թ. պարսպապատված գերեզմանոցի փարթամ ծառերի համբերատար մենախոսությունը, երբեմն էլ՝ ուղերձները, մի տեսակ նախապատրաստում են գերեզմանոցի այցելուներին: Գերեզմանոցի դարպասների վերևում դրված խաչն ու Թուրքիայի դրոշը տեսնելով՝ սառչում ես: Տևորենի ասելով՝ Թուրքիայի դրոշը հազվադեպ է տեղադրում գերեզմանոցի մուտքի մոտ, ինչպես ինքն է ասում՝ առիթից առիթ, տոնից տոն:

Գերեզմանոցն աներևակայելի կոկիկություն ունի, որտեղ անգամ ճանապարհներն են բաժանված: Փոքրիկ ուղեցույց-սլաքը մատնանշում է դեպի շիրմաքարեր տանող ճանապարհները կամ ուղիները, որոնք իրենց անվանումներն ունեն, օրինակ՝ Վարդանանց ուղի և այլն: Ամեն քայլափոխի աղբարկղներ են տեղադրված, երբեմն էլ հարմարություն չգտնելով՝ ծառերին են ամրացրել: Նստարաններին կարելի է հանդիպել մարդկանց, ովքեր հանգիստ, ինչպես պուրակում, գրուցում են: Չնայած դրան, «Այստեղը գեշ բան մըն է: Յուզում ունի, այստեղը երկու ընկերս թաղեցի: Անկե առաջ էլ ընկերներս այստեղ թաղվեցան... Շատ գեշ բան մըն է»,- հանկարծ ասաց գերեզմանոցի տևորենն ու հուզմունքից գլուխը շրջեց:

Թվում է, գերեզմանոցի 24.000 մետր տարածության մեջ ամեն բան այնքան նման է, ինչպես երբեք: Տևորենը մերթ պատմում է այնտեղ թաղված երևելի մարդկանց գործունեության մասին, մերթ ինչ-որ բան փնտրող հայացքով հեռունեքը նայում: «1500 հատ ըսածիս պես շիրիմ ունիմ, համա պառկողը չհամրեցա: Ըսածիս պես՝ շիրիմի մեջը 3 հոգի ալ կըրնա ըլլալ, 5 հոգի ալ»: Նրա ասելով՝ Սկյուտարում հայերն այնքան էլ շատ չեն, ինչպես, ասենք, Քուրթուլուշում, Ֆերիկոյում: Եվ դա է պատճառը, որ թաղումները քիչ են լինում: Ըստ նրա՝ տարեկան 20-25 թաղման արարողություն հազիվ է լինում: «Պետրոս Դուրյանի հանգստաքարն է»,- հանկարծ ասաց գրուցակիցս, որից հետո երկուսս էլ լռեցինք: Լուսանկարի փոքրիկ շրջանակից խաղաղ, տխուր նայում է Պետրոս Դուրյանը: «Դուրյանի ձախ կողմում՝ մոր, աչ կողմում՝ եղբոր շիրիմներն են»,- նկատեց գրուցակիցս: Յսկա ծառերի ստվերի տակ, փողոցի երթևեկից համրացած՝ այստեղ է, որ դարձյալ սկսում ես փնտրել անպատասխան հարցերի տրամագիծն ու մարդկային հարաբերությունների իրական դիմագիծը: «Այստեղը վերջակետն է, անոր համար կյանքին արժեքը կըրնանք ավելի լավ գիտենալ»,- ասում է Ստեփան Թալասյուղյուն: